ԳԱՍՏԱԿ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթը

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ

16—31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1995 Թ., № 20 (53)

ԳԻՆԸ՝ 25 ԴՐԱՄ

ՀՀ ԳԱԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1995 թվականի դեկտեմբերի 1-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողով: Այն նախագահում էր ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը:

ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանը հանգամանորեն ներկայացրեց հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ իր և ակադեմիկոսներ Գ. Բ. Ջանուկյանի, Գ. Խ. Սարգսյանի, Մ. Գ. Ներսիսյանի, Վ. Բ. Ֆանարջյանի, Ա. Հ. Մանթաշյանի և Մ. Լ. Տեր-Միքայելյանի հանդիպման արդյունքները:

Հանդիպմանն ըստ ամենայնի քննության են առնվել գիտության զարգացման հեռանկարային հարցեր՝ կապված մասնավորապես ԳԱԱ ինքնակառավարման անցնելու հիմնախնդիրների հետ:

ԳԱԱ ղեկավարության ավելի լայն կազմով՝ նույն հարցերի շուրջ շահավետ հանդիպում է կայացել նաև հանրապետության վարչապետ Հ. Բագրատյանի հետ:

Ինքնակառավարմանը վերաբերող առավել որոշակի հարցեր են շոշափվել նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի առանձնազրույցի ընթացքում: Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ինչպես հանդիպմանը, այնպես էլ առանձնազրույցի միջոցին հայտնել է ԳԱԱ ինքնակառավարմանը լայնորեն աջակցելու պատրաստակամություն:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը շեշտեց, որ ինքնակառավարման ուղղությամբ արդեն ոչ միայն մշակվում են ծրագրեր, այլև արվում են որոշակի քայլեր՝ բարելավելու ինստիտուտների աշխատանքային պայմանները, գիտնականների սոցիալական վիճակը:

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը քննարկեց կազմակերպական հարցեր.

Նկատի ունենալով, որ ս. թ. դեկտեմբերին լրանում է 1993 թ. ապրիլի 8-ի ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի ընդունած որոշման ժամկետը, ըստ որի ԳԱԱ պրեզիդենտի լիազորությունները համարվեցին մինչև 1995 թվականի դեկտեմբերը, որը չի համապատասխանում ՀՀ ԳԱԱ օրենադրությանը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ ԳԱԱ օրենադրության նախագահության ամբողջ կազմի ընտրությունները անցնում են կացվում միաժամանակ, ժողովը որոշեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանի գործունեության ժամկետը համապատասխանեցնել ԳԱԱ նախագահության ամբողջ կազմի հերթական ընտրության հետ՝ մինչև 1999 թ. հունիս ամիսը:

Նկատի ունենալով, որ ս. թ. դեկտեմբերին լրանում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Բ. Բարխուդարյանի լիազորությունների ժամկետը, ժողովը որոշեց այն երկարաձգել մինչև ՀՀ ԳԱԱ նախագահության ամբողջ կազմի հերթական ընտրությունները՝ 1999 թ. հունիս ամիսը:

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը Յուրի Հայկի Շուքուրյանին մինչև 1999 թ. հունիս ամիսն ընտրեց ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ— ՖՄՏԳԲ-ի ակադեմիկոս-քարտուղար:

Ժողովը հավանություն տվեց ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմանը՝ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտներ Գ. Խ. Սարգսյանի և Գ. Ա. Բրուտյանի պարտականությունների վերաբաշխման վերաբերյալ, համաձայն որի ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ Գ. Խ. Սարգսյանի վրա դրվեց հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պարտականությունները, իսկ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ Գ. Ա. Բրուտյանի վրա՝ արտաքին կապերի և միջազգային գիտական կենտրոնների հետ համագործակցության և հրատարակչության ղեկավարման հարցերը:

Նախագահությունը քննարկեց...

Վերջերս հաճախ է ՀՀ ԳԱԱ նախագահության նիստը սկսվում անսովոր տրամադրությամբ: Հարցերի բուռն քննարկումներին ու բանավեճերին նախորդում է տոնական տրամադրությունը: Եվ դա լավ է: Լավ է, որ թե՛ նախագահությունը և թե՛ բաժանմունքների, ինստիտուտների ղեկավարները չեն մոռանում իրենց գործընկերների հոբելյանները: Նաև լավ է, որ մեր համակարգում շատ են մարդիկ, ում հոբելյանը սոսկ տարիների շարան չէ, այլ գիտական նվաճում է, տնտեսական ու մանկավարժական ակնառու ձեռքբերում և այդ առումով էլ՝ հիշարժան:

Այս անգամ ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստում ծաղկեփնջեր և ջերմ մաղթանքներ հասցեագրվեցին ակադեմիկոս Ռոբերտ Վարդգեսի Աթոյանին՝ վաթսունամյակի առիթով:

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիրներից, գիտական աշխատանքի երկարամյա կազմակերպիչ, ինֆորմատիկայի ու հաշվիչ տեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն՝ ահա Ռ. Վ. Աթոյանի կենսագրությունը խիստ համառոտ բառերով: Ու՝ համեստ մարդ, հիանալի ընկեր: Այսպես բնութագրեց նրան ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը՝ իր շնորհավորանքում, որն ավելի շատ գործընկերոջ ու բարեկամի ջերմ, անկեղծ խոսք էր: Հոբելյարին հանձնվեց ՀՀ ԳԱԱ նախագահության ողջույնը, որը ստորագրել են ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը և փոխպրեզիդենտ Յու. Շուքուրյանը: Ռ. Աթոյանին շնորհավորեցին իր գործընկերները, բարեկամներն ու մերձավորները: Վերջում ելույթ ունեցավ հոբելյարը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Վ. Աթոյանը:

°•°

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստը, որը սկսվեց ուրախ տրամադրությամբ, լսեց փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Է. Ս. Գաբրիելյանի հաղորդումը՝ ԱՄՆ կատարած ուղևորությանը արդյունքների մասին: Գիտաժողովը, որին մասնակցել է նա, նվիրված էր տրամադրության խնդիրներին: Հայաստանի պատվիրակը ասելու շատ բան է ունեցել. ավերիչ երկրաշարժ, երկրի փլուզում, պատերազմ, տնտեսական համակարգի կտրուկ փոփոխություն, շրջափակում, էներգետիկ ճգնաժամ, հարյուր հազարավոր բռնագաղթվածներ ու նյութական ծանր վիճակ. այս ամենը իրենց կնիքն են թողել բնակչության տրամադրության վրա, ստեղծելով սթրեսային ծանր կացություն: Այդ ամենը ստեղծում են տագնապ ու հոգեկան ընկճվածություն, որոնք պարտադիր չէ, որ առաջացնեն հոգեկան շեղումներ, բայց որոնք՝ պարտադիր առաջացնում են այլևայլ հիվանդություններ: Ինչպես կանխել այդ ամենը: Իհարկե, այն կանխելու լավագույն միջոցը՝ կենսապայմանների և բարոյահոգեբանական ամբողջ մթնոլորտի կտրուկ բարելավումն է: Բայց քանի որ դա տասնամյակների ծրագիր է, ուրեմն առկա է, անհետաձգելի առողջապահական մարմինների միջամտությունը: ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ է. Ս. Գաբրիելյանը հենց այդ ծրագիրն է ներկայացրել գիտաժողովում (ծրագրի մանրամասները՝ մեր թերթի գալիք հրապարակումներում):

°•°

Նախագահությունը քննարկեց և հաստատեց ակադեմիայի ընդհանուր ժողով հրավիրելու հարցը: Որոշվեց ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողով հրավիրել դեկտեմբերի 1-ին:

Ակադեմիկոս Ռոբերտ Վարդգեսի Աթոյանին

ՄԵԾԱՐԳՈ ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԳԵՍԻ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքը ջերմորեն շնորհավորում են Ձեզ՝ ծննդյան 60-ամյակի առթիվ:

Լինելով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Դուք հայտնի եք որպես ականավոր գիտնական, փորձառու մանկավարժ և արտադրության կազմակերպիչ: Դուք անսահման նվիրվել և անմնացորդ ծառայել եք գիտությանը, կրթությանը և տեխնիկային:

Մեծ է Ձեր վաստակը ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի զարգացման գործում: Կառավարման ավտոմատացված համակարգերի նախագծման տեսության և նրանց իրականացման մեթոդներին, տեխնոլոգիաներին նվիրված Ձեր գիտական աշխատությունները արժանացել են լայն ճանաչման: Դուք եղել եք Հայաստանում հաշվողական տեխնիկայի ստեղծման և զարգացման ամենաակտիվ հեղինակներից մեկը:

Հայտնի են Ձեր ղեկավարությամբ կատարված խոշոր նշանակություն ունեցող բարդ կառավարման ավտոմատացված համակարգերի, բազմամեթենայական և բազմապրոցեսային կոմպլեքսների մշակումները և ներդրումները: Այդ աշխատանքների համար Ձեզ շնորհվել են պետական մրցանակներ, շքանշաններ և այլ պարգևներ:

Ձեր գիտական ղեկավարությամբ իրականացվող մշակումները հնարավորություն ընձեռեցին հանրապետությունում ստեղծել առաջադեմ գիտատեխնիկական ուղղություն, գիտնականների, կոնստրուկտորների և ինժեներների մի հանաչված դպրոց, որը ընդունակ է լուծելու ամենաբարդ գիտատեխնիկական խնդիրներ և պրոբլեմներ:

Դուք մշտապես հանդիսացել եք տեխնիկայի բնագավառում նորի ստեղծման նախաձեռնող: Ձեր գիտական հետազոտությունները չեն սահմանափակվում միայն Երևանի կառավարման ավտոմատ համակարգերի ինստիտուտի շրջանակներում: Դուք ամենայն բարեխղճությամբ օգնում եք հանրապետության շատ գիտահետազոտական հիմնարկների և արտադրական ձեռնարկությունների, նրանց ուսումնասիրությունների, հետազոտությունների և արտադրության կազմակերպման բնագավառներում:

Մեծարգո Ռոբերտ Վարդգեսի, մեծ բարձր եք գնահատում Ձեր պահանջկոտությունը, հետևողականությունը և սկզբունքայնությունը:

Սիրելի Ռոբերտ Վարդգեսի: Շնորհավորելով Ձեր հոբելյանը, մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և բազեղծագործման նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս՝
Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ՖՄ և ՏԳ բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար՝
ՅՈՒ. ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

Ականավոր պատմաբանը և հասարակական գործիչը

(ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բոլորից անվանի պատմաբան, նշանավոր հասարակական գործիչ, գիտության և կրթության հմուտ կազմակերպիչ Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի ծննդյան 85 տարին: Նա ծնվել է Աշտարակի շրջանի Փարպի գյուղում, որտեղ էլ ստացել է իր սկզբնական կրթությունը: Այնուհետև ուսումը շարունակում է Երևանի, հայ մեծերից մեկի՝ Խ. Աբովյանի անունը կրող միջնակարգ դպրոցում, որից հետո ընդունվում և հաջողությամբ ավարտում է Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Նա երկու տարի ուսանել է Մոսկվայի պատմության և գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում:

Մ. Գ. Ներսիսյանը գիտական ու հասարակական գործունեության, հայրենիքին ծառայելու հիանալի ուղի է անցել: 1939 թվականին նա պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում՝ 1870—1880 թվականներին» թեմայով: Արխիվային նորահայտ փաստաթղթերի ու նյութերի հիման վրա գրված գիտական այդ արժեքավոր աշխատությունը հրատարակվեց 1940 թվականին: Գիտականորեն վերլուծելով հայ նարոդնիկության խնդիրը, հեղինակն սկզբունքորեն հերքում է այն ժամանակ գոյություն ունեցած այն անհիմն տեսակետը, թե իբր նարոդնիկությունը հիմքեր չի ունեցել, կապված չի եղել Հայաստանի և Անդրկովկասի իրականության հետ: Հիմնվելով պատմագիտական հարուստ արխիվային աղբյուրների վրա, նա բացահայտել է հայ հեղափոխական նարոդնիկների գործունեությունը, նրանց հայացքներն ու ծրագրերը, ինչպես նաև նարոդնիկների ու ազատագրական շարժման գործիչների կապերը: Մ. Գ. Ներսիսյանի ստեղծագործական աշխատանքն ընդհատվեց, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Այդ ժամանակ նա ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության և նյութական մշակույթի ինստիտուտի տնօրենն էր: Թողնելով աշխատանքը, 1941 թվականի օգոստոսին մեկնում է ռազմաճակատ: Որպես 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի քաղաքաձի ավագ հրահանգիչ, նա ակտիվորեն ու նվիրվածությամբ մասնակցում էր ռազմական գործողություններին: Նովոռոսիյսկի մոտակայքում տեղի ունեցած մարտերում վիրավորվելուց հետո, մարտական մի շարք մեդալներով նա վերադառնում է Երևան:

Հայտնի է, որ Հայրենական մեծ պատերազմի դրժվարին ժամանակաշրջանում 1943 թ. ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Արդեն 1944 թ. նա ստանձնեց նորաստեղծ ակադեմիայի պատմության ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը, իսկ տնօրենն աշխարհահռչակ գիտնական Հովսեփ Օրբելին էր:

Սկսվում է նրա գիտական գործունեության նոր, բեղմնավոր փուլը: Վաստակաշատ պատմաբանի ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գիտական ուսումնասիրության սկիզբը: Մեր ժողովրդի պատմության համար այդ հրատապ խնդրին նա կրկին անդրադարձավ հետագա տարիներին:

1962 թվականին նա հրապարակում է Զեյթունի ապստամբության 100-ամյակին նվիրված հոդված: Ոչ մի հայտնի չէ, որ զեյթունցիների 1862 թ. ապստամբությունը հայ ազատագրական շարժման փայլուն էջերից մեկն է: Աշխատության մեջ նա տվել է Զեյթունի հերոսամարտի պատմագիտական հակիրճ բնութագիրը: Նա գրում է. «Զեյթունի 1862 թ. ապստամբության նշանակությունը դուրս եկավ մի գավառի շրջանակներից: Ի տարբերություն նախորդ շրջանների ապստամբությունների, 1862 թ. հերոսամարտը ստացավ ընդհանուր, համազգային նշանակություն: Նա օրինակ հանդիսացավ հայության մյուս հատվածների համար և խոշոր ազդեցություն թողեց հետագա շրջանի հայ ազատագրական պայքարի վրա: Բնորոշ է, որ 1863 թ. սուլթանական բռնապետության դեմ ոտքի կանգնեց Մշը, իսկ 1865 թ. Զարսանչակի հայ գյուղացիությունը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը նոր դարաշրջան բացեց թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման պատմության մեջ»:

Միանգամայն սպառիչ պատմագիտական գնահատական:

1965 թվականին, Հայոց ցեղասպանության հիսնամյակին Մ. Գ. Ներսիսյանը հրապարակում է արժեքավոր հոդված՝ զորավար Անդրանիկի լեգենդար գործունեության մասին: «Ժողովրդական հերոսը» վերնագրով այդ հրապարակման մեջ նա առաջին անգամ Հայաստանում համակողմանիորեն բնութագրեց մեծ հայրենասերի, տաղանդավոր զորահրամանատարի փայլուն կերպարը: «Հայ ժողովրդի ազգային հերոսը,— գրում է գիտնական-պատմաբանը,— շուրջ 30 տարի շարունակ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Նիկողայոս Մառ. ծնվել է 1864 թվականի դեկտեմբերի 25-ին, Քութայիս արդյունաբերական քաղաքում: Հետո՝ Սանկտ Պետերբուրգի համալսարան, որն ավարտել է 1888-ին: Առաջին անգամ Հայաստան է եկել 1890 թվականին, իր մագիստրոսական թեզի համար նյութեր հավաքելու: 1891 թվականին Ս. Պետերբուրգի համալսարանի հայ լեզվաբանության և բանահյուսության ամբիոնի դոցենտ էր:

Անի, 1892 թվական: Սկսվեցին Ն. Մառի առաջին պեղումները Բագրատունյաց մայրաքաղաքում: 1904 թվականին նրա գլխավորությամբ արշավախումբն այնպիսի մեծածավալ հայտնագործություններ էր արել, որ նույնիսկ Անիի կենտրոնական փողոցը անվանեցին «Մառի փողոց»: Իսկ 1905 թվականին հայտնաբերվեց աշխարհահռչակ Ս. Գրիգոր՝ Գագկաշեն եկեղեցին:

1917 թվականը դարձավ Ն. Մառի պեղումների վերջին տարին: 1918-ին Ս. Պետերբուրգից Ն. Մառը Անիի հնագիտական պեղումներից հայտնաբերած նյութերով մի ամբողջ վագոն ուղարկեց Թիֆլիս (որտեղ գտնվում էր հայկական թանգարանը), սակայն ճանապարհին վագոնը թալանվեց, արժեքները կորան:

Հայ ժողովուրդը հիշում ու բարձր է գնահատում իր պատմության երախտավոր Նիկողայոս Մառի՝ մեծ գիտնականի, հայ ժողովրդի մեծ բարեկամի անունն ու հիշատակը:

ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ.— Ն. Մառը (կենտրոնում)՝ Պ. Կրեյդենցկու, Ն. Ադոնցի, Վ. Բերիձեի, Ա. Անդրիանովի, Լ. Քալանթարի, Յու. Ստրումիի, Յա. Սմիռնովի, Ա. Վրույրի և Հ. Օրբելու հետ (1912 թվական):

Սկսվել է «Նպատակ» թերթի տարվա բաժանորդագրությունը

1996 թ. բաժանորդագրությունը

ՏԱՐՎԱ ԲԱԺՆԵԳԻՆԸ 600 ԴՐԱՄ Է

ԴԻՄԵՑԵՔ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՌ. 22-44-26

Ականավոր պատմաբանը և հասարակական գործիչը

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մարտնշել է սուլթանական արյունոտ բռնակալության դեմ, կազմակերպել և ղեկավարել է արևմտահայ գյուղացիության ինքնապաշտպանական-ազատագրական կռիվները, միշտ հանդես բերելով անօրինակ խիզախություն և ճնշամտություն»: Մեծ զորավարի պաշտպանական հերոսամարտերը արժանավայել պատասխան էին սկզբում համիդականների և այնուհետև ենիտարների պարագլուխների հայատիպ ֆաղամականության ու գործողություններին:

Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի աշխատությունների զգալի մասը նվիրված է հայ-ռուսական հարաբերությունների դարավոր պատմությանը: Գիտական այդ ուսումնասիրությունները գետեղված են «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» (ռուսերեն) երկհատորյակում, որտեղ Ռուսաստանի, հատկապես Մոսկվայի և Լենինգրադի, Վրաստանի և Հայաստանի մինչ այդ չհրապարակված արխիվային փաստաթղթերի ու նյութերի հիման վրա լուսաբանել է մի շարք կարևոր պատմագիտական պրոբլեմներ: Առաջին հատորն սկսվում է «Ա. Վ. Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770—1790 թվականներին» ուսումնասիրությամբ: Նրանում հավաստի փաստաթղթերով ցույց է տրված ռուս մեծ զորավարի ակտիվ մասնակցությունը հայ-ռուսական համագործակցության ու գինակցության հետ կապված խնդիրներին: Հետաքրքրությունն է ներկայացնում հեղինակի կողմից հայտնաբերած պատմական Հայաստանի և նրա հարևան երկրների քարտեզը, որի վրա կարծես թե հաստատելու նպատակով իր ստորագրությունն է դրել Ա. Վ. Սուվորովը: Առաջին հատորում տեղ են գտել «Հայերի մասնակցությունը 1812 թվականի հայրենական պատերազմին», «Դեկաբրիստ Ե. Լաշինովը և նրա նոթերը Հայաստանի մասին» ուսումնասիրությունները, որոնք նոր լույս են սփռում հայ-ռուսական առնչությունների վրա: Առաջին հատորն ավարտվում է «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ժամանակակիցների գնահատությամբ» ուշագրավ ուսումնասիրությամբ: Լուսաբանելով Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և բնութագրելով այդ ակտի պատմական նշանակությունը, Մ. Գ. Ներսիսյանը ցույց է տվել 1826—1828 թվականների պատմական իրադարձությունների ժամանակակիցների, նշանավոր հայ մտածողների այն ճաստատուն տեսակետը, որ այդ հիրավի արաջադիմական քայլով նոր էջ բացվեց հայ ժողովրդի պատմության մեջ: «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» աշխատության երկրորդ հատորում (լույս է տեսել 1961 թվականին), հատկապես ռուսական արխիվների նորահայտ փաստաթղթերով ամբողջությամբ լուսաբանված են 1812 թվականի հայրենական պատերազմի փառաբանված հերոս, գեներալ, հայտնի բանաստեղծ Դենիս Դավիդովի ռազմական ու դիվանագիտական, ինչպես նաև դեկաբրիստների Հայաստանում ծավալած գործունեության բոլոր հիմնական կողմերը: Ահա լուսաբանված հարցերի համառոտ շարքը. «Նոր նյութեր Դենիս Դավիդովի Հայաստանում գտնվելու մասին», «Դեկաբրիստները Հայաստանում», «Դեկաբրիստների մասնակցությունը խանական լծից Հայաստանի ազատագրությանը», «Դեկաբրիստների մասնակցությունը 1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմին», «Հանդիպումներ Գրիբոյեդովի և Պուշկինի հետ», «Դեկաբրիստները Հայաստանի մասին» և այլն: Հեղինակի հետևությունն այն է, որ Դենիս Դավիդովի և դեկաբրիստների հայանպաստ գործունեությունը Հայաստանում է՛լ ավելի ընդլայնեց ու խորացրեց ռուս-հայկական կապերը, նոր ավանդ հանդիսացավ երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Մ. Գ. Ներսիսյանի պատմագիտական ուսումնասիրությունները հայ-ռուսական հարաբերությունների բնագավառում ոչ միայն արտացոլում են անցյալը, այլև բնութագրվում են մեր ժամանակի հնչեղությամբ: Նա հանրագումարի բերելով մեր ժողովրդի հազարամյակների պատմության օրինաչափություններն ու առանձնահատկությունները ոչ միայն վճռականորեն պաշտպանում է հայության ռուսական կողմնորոշումը, այլև այդ կոնցեպցիան բարձրացնում է մեր ժամանակի համար միանգամայն նոր աստիճանի:

Հայտնի է, որ հայերի ռուսական կողմնորոշումը երեք հարյուրամյակի պատմություն ունի: Պատմական իրողությունն այն է, որ 16—17-րդ դարերում հայ ֆաղամական մի շարք գործիչներ բազմիցս դիմել են արևմտյան պետություններին՝ օգնելու հայ ժողովրդին, որը գտնվում էր սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի բռնատիրական լծի տակ: Եվ ինչ, եվրոպական պետություններին ներկայացված բոլոր դիմումները էլ մնացին միայն թղթի վրա, պարզապես մերժվեցին ուղղակի կամ անուղղակի ձևով: Դրանից հետո հայ ֆաղամական միտքն ընտրեց ժամանակի ոգուն համապատասխան միակ ճշմարիտ ուղին՝ ռուսական կողմնորոշումը: Այդ կապակցությամբ անհ թե ինչպիսի պատմագիտական ընդհանրացում է կատարում ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը: Նա գրում է. «Գիտակցվեց այն իրողությունը, թե միակ հզոր պետությունը, որ կարող է ու ցանկություն ունի օգնել հայերին, Ռուսաստանն է: Այստեղ ևս սկսեց գործել մեծ ու փոքր երկրների շահերի «համընկնման օրենքը»: Այսպիսով հայերի ռուսական կողմնորոշումը ոչ թե «սխալ հաշիվների» հետևանք էր, ինչպես պնդում են առանձին ռուսատյացներ (ռուսոֆոբներ), այլ ռեալ իրադրությունների ճիշտ գնահատման և ազգային շահերը գիտակցող առողջ մտածողության արդյունք»:

Այս խոսքերի մեջ թե՛ պատմագիտական, թե՛ ֆաղամական տեսանկյունից ճշմարտացիորեն արտացոլված է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ամբողջ իմաստը: Որպես հայկական հարցի գիտակ, սկզբունքորեն և հետևողականորեն պաշտպանելով Խաչատուր Օրու, Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Խաչատուր Արովյանի, Միքայել Նալբանդյանի, Ներսես Աշտարակեցու, Բաֆֆու, Գրիգոր Արծրունու, Կոմիտասի, Գրիգոր Զոհրապի, Հովհաննես Թումանյանի, Անդրանիկի, Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի և մյուս մեր իմաստունների ռուսական կողմնորոշումը, Մ. Գ. Ներսիսյանը պատմագիտական ու ֆաղամագիտական տեսանկյունից համակողմանիորեն վերլուծել է հայոց ֆաղամական կողմնորոշման հարցերը ոչ հեռավոր անցյալում և մեր ժամանակում: Նրա տեսակետի իմաստն այն է, որ եթե չլիներ խորհրդային Ռուսաստանի փրկարար օգնությունը, ապա նա կուլենար այն ողբերգական ճակատագիրը, ինչպիսին ունեցավ արևմտահայությունը: Այս հարցին նա անդրադարձել է իր մի շարք աշխատություններում:

Իր հանդիպումներից մեկում Մ. Գ. Ներսիսյանը միանգամայն տեղին ընդգծել է աշխարհճանաչակ գրող, մեծ հայրենասեր Վիլյամ Սարոյանի հետևյալ խոսքերը. «Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիգ է ռուս ժողովուրդը: Մենք չենք կարող զոյատևել առանց զորավոր պաշտպանության... Ռուսները մեր եղբայրներն են, մեր բարեկամները»:

Մեծ հայրենասերն ու հմուտ պատմաբանն այսօր, մեր բարդ ու դժվարին ժամանակներում իրավացիորեն մերժում է այսպես կոչված «երրորդ ուժի» բացառման տխրահռչակ «տեսությունը»: Միանգամայն համամիտ լինելով նրա իրատեսական մտածողությանը, հարկ ենք համարում բերել նրա հստակ ու պատմականորեն լիովին հաստատված տեսակետը: Ահա թե ինչ է գրում նա. «Մեր դիլետանտներից մի քանիսը խստորեն քննադատում են հայ ֆաղամական գործիչներին այն բանում, որ նրանք փորձելով ազատվել օտարների տիրապետությունից, չեն հենվել սեփական ուժի վրա, այլ դիմել են «երրորդ ուժի» օգնությանը: Այս կարծիքն ունեցողները պարզապես մոռանում են, չեն գիտակցում այն կարևոր հանգամանքը, որ հայ ժողովուրդը, ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում, ապրում էր մեծ մասամբ թվական գերակշռություն ունեցող մահմեդական բնակչության մեջ, չէր կազմում միաձույլ ու հզոր հավաքական ուժ, ուստի ի վիճակի չէր սեփական ուժերով, առանց օգնության թոթափել դեռևս բավական ուժեղ բռնապետությունների ծանր լուծը: Այսպիսով, անցյալի մեր գործիչներն այս հարցում ևս ավելի իրատես էին, քան մակերեսային մտածողություն ունեցող այսօրվա ուռա հայրենասերները»:

Այս խորիմաստ խոսքերի մեջ դրսևորվում է հայ ժողովրդի պատմության արդի դարաշրջանի իրադարձությունների պատմագիտական ու ֆաղամագիտական համակողմանի վերլուծությունը, Հայաստանի աշխարհաֆաղամական (գեոպոլիտիկական) պայմանների յուրահատկությունը: Մ. Գ. Ներսիսյանի բազմաբովանդակ ստեղծագործության մեջ կարևոր տեղ է գրավում հայերի ցեղասպանության համակողմանի ու գիտական լուսաբանումը: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու խմբագրությամբ 1966 թվականին լույս տեսավ «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ու նյութերի հիմնարար ժողովածուն (ռուսերեն): 1982 թվականին իրականացվեց ռուսերեն երկրորդ հրատարակությունը, իսկ 1991 թվականին՝ հայերեն առաջին հրատարակությունը: Այդ մեծածավալ ուսումնասիրության մեջ ամփոփված են հայերի ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր ու նյութեր հայկական, ռուսական, թուրքական, գերմանական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և այլ աղբյուրներից: Հատկապես մեծ արժեք են ներկայացնում ռուսական արխիվային փաստաթղթերն ու նյութերը, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Գրքում հավաստի փաստաթղթերով, տարբեր պետությունների դեսպանների, հյուպատոսների, զանազան պաշտոնյաների զեկուցագրերով, ականատեսների վկայություններով լիովին հիմնավորված են ինչպես 19-րդ դարի վերջին, այնպես էլ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի ցեղասպանության բոլոր հիմնական կողմերը:

Հիշարժան է, որ երբ 1995 թ. ապրիլի 21—23-ը Երևանում, Հայոց Մեծ Եղեռնի 80-ամյակի կապակցությամբ տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, նրան մասնակցում էին Հայաստանի և արտասահմանյան մի շարք երկրների բազմաթիվ նշանավոր մասնագետներ: Մեծ պատմաբանի հավաստի փաստերով հագեցված, բովանդակալից գիտական զեկուցումը լսվեց մեծ ուշադրությամբ և արժանացավ բարձր գնահատականի: Հայերի ցեղասպանության 80-ամյակի առթիվ գրած «Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը» հոդվածում նա գրում է. «Ութ տասնամյակ է անցել արևմտահայության 1915 թ. ցեղասպանությունից: Տեղի են ունեցել խոշոր իրադարձություններ, կատարվել են շատ փոփոխություններ, սակայն մեր ժողովուրդը միշտ էլ իր բարոյական պարտքն է համարել չմոռանալ ու պատշաճ հարգանքով նշել մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը: Բայց խոսել անցյալի մասին, նշանակում է խոսել նաև մեր ներկայի ու ապագայի մասին, նշանակում է լինել զգոն ու սթափ, հաշվի առնել պատմության դասերը, որպեսզի խույս տանք նոր կոտորածներից ու ողբերգություններից»:

Մ. Գ. Ներսիսյանին հատուկ է մի բնորոշ գիծ: Դա այն է, որ ստեղծագործելով երկու տարբեր ֆաղամական համակարգերի՝ խորհրդային և այժմյան վարչակարգերի պայմաններում, նա ոչ միայն չի ուրանում անցյալը, այլև ընդգծում է խորհրդային ժամանակաշրջանի ազգային վերածնունդն ու տնտեսական, սոցիալական, գիտական ու մշակութային աննախադեպ վերելքը, հայ ժողովրդի բարգավաճ կյանքը:

Ներկայումս նա շարունակում է իր պատմագիտական սկզբունքային գործունեությունը:

Օրինակներ հարց է առաջանում, թե այսօր, մեր ծանր ժամանակներում ինչով է զբաղված ծերունի, սակայն իսկական երիտասարդական ավյունով լի մտածողը: 85-ամյա գիտնական-պատմաբանն այժմ աշխատում է հայերի ցեղասպանության փաստաթղթերի ժողովածուի երկրորդ մասի վրա, որն ընդգրկում է 1919—1922 թվականները:

Նշելով հարգարժան հոբելյարի ծննդյան 85-տարին, հարկ է ասել, որ նրա պատմագիտական աշխատանքը մշտապես զուգակցվել է գիտակազմակերպչական, մանկավարժական ու հասարակական արդյունավետ գործունեության հետ: 1950 թվականին, երբ ճանաչված պատմաբանը 40 տարեկան էր, ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս ու միաժամանակ ակադեմիայի փոխպրեզիդենտ: Շուրջ երեք տասնամյակ լինելով ակադեմիայի նախագահության անդամ, տարիներ շարունակ գլխավորել է հասարակական գիտությունների բաժանմունքն ու հրատարակչական խմբագրական խորհուրդը, դեկավարել գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, տասներկու տարի եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր, հայոց պատմության դասընթացներ է վարել հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում:

1958 թվականին նրա նախաձեռնությամբ հիմնադրվում է «Պատմաբանասիրական հանդեսը», որի անփոփոխ խմբագիրն է մինչև օրս: Նրա անխոնջ շանքերի շնորհիվ այդ հայագիտական հետաքրքիր պարբերականն իրավամբ միջազգային լայն ճանաչման է արժանացել:

Իր հասարակական ակտիվ դիրքորոշման շնորհիվ, Մ. Գ. Ներսիսյանը բազմիցս ընտրվել է ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ գերագույն խորհուրդների պատգամավոր: Նրա ծառայությունները ըստ արժանվույն են գնահատվել: Նա պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության շքանշանների, մի շարք մեդալներով: 1994 թվականին պարգևատրվել է «Գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» Երևանի պետական համալսարանի պատվավոր մեդալով:

Եվ ահա վաստակաշատ գիտնականի հոբելյանը հանդիսավորությամբ նշվեց հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայում:

Ջերմորեն շնորհավորելով վաստակաշատ ակադեմիկոսի հոբելյանը, մաղթում ենք արևշատություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ, ի բարություն հայրենիքի, ի փառս համայն հայության:

Ստեփան ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պրոֆեսոր

Ֆերոմոններ՝ թունաքիմիկատների փոխարեն

Ավելի քան երեք տասնամյակ ճանաչում եմ Շալիկո Բաղանյանին. շարժուն, կենսուրախ, մշտապես գիտական որոնումների մեջ հիանալի մարդուն, որ վերջերս ճանաչվել է Տարվա մարդ:

1956-ին կարմիր դիպլոմով ավարտելով Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը, որպես լաբորանտ աշխատանքի է անցել գիտությունների ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտում, որի տնօրենն է այսօր: 1960-ին թեկնածուական թեզ է պաշտպանել, մեկ տասնամյակ հետո՝ դոկտորական, մեկ հնգամյակ հետո նրան պրոֆեսորի կոչում է շնորհվել: Շալիկոն այն երջանիկ քիմիկոսներից է, որ պատիվ է ունեցել աշխատելու Լոնդոնի ու Օքսֆորդի, Փարիզի և Հարավային Իլինոյսի համալսարաններում, Հայդելբերգի Մաքս Պլանկի ինստիտուտում, արժանացել է Քեմբրիջի Միջազգային կենսագրական ինստիտուտի պարգևին:

— Հարգարժան պրոֆեսոր, ոչ բոլորը գիտեն Ձեր դեկավարած գիտահետազոտական ինստիտուտի կազմավորման, նրա սկզբնական տարիների և ձեռքբերումների մասին: Դուք նրա հասակակիցն եք և ամեն ինչ ձեր աչքի առաջ է կատարվել ու կատարվում է: Խնդրում եմ համառոտակի ներկայացնել:

— Խնդրեմ, սիրով: Սկսեմ նրանից, որ չորս տասնամյակ առաջ դեղագործական գիտահետազոտական լաբորատորիայի հիման վրա Երևանում կազմակերպվեց հանրապետության գիտության կաճառի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը: Երկու տարի հետո քիմիայի ինստիտուտի օրգանական սեկտորի բազայի վրա ծնվեց մեր ինստիտուտը, որի առջև դրված կարևորագույն պրոբլեմներից մեկը նյութի քիմիական կառուցվածքի և հատկությունների միջև գոյություն ունեցող կապի բացահայտումն էր: Այդ պրոբլեմը խոշոր ճանաչողական-իմացաբանական նշանակությունից զատ, առաջնակարգ գործնական նշանակություն ուներ: Որպես կարևոր պրոբլեմ շարունակում էր մնալ նյութերի ստացման նոր մեթոդների և ուղիների որոնումը: Հիշարժան էր մասնավորապես պոլիցիկլիկ հիդրոարոմատիկ կետոնների սինթեզմանը նվիրված ծավալուն աշխատանքները, որոնք ելակետ են ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզման համար:

Հնգամյա միացությունների բնագավառում այստեղ ուսումնասիրությունները շարունակվեցին իմ մասնակցությամբ և ղեկավարությամբ: Աննախադեպ մեծ զարգացում ապրեց չհագեցած ու բարձրատոլեկուլյար միացությունների քիմիան և որպես առանձին ուղղություն բյուրեղացավ կենսաբանորեն ակտիվ նյութերի քիմիան: Հիմք դրվեց մի նոր, չափազանց հետաքրքիր ու կարևոր ուղղության՝ էլեմենտաօրգանական միացությունների քիմիային, հետազոտություններ կատարվեցին ֆոսֆոր, ծծումբ և բոլոր օրգանական միացությունների բնագավառում:

Վերջին տասնամյակները բնորոշվում են բնական միացությունների բիոսինթեզի և հատկապես նրանց ու կենդանական աշխարհի փոխադարձ կապի արդարանման առաջընթացով: Արդյունքում, այսօր հայտնի են մեկ տասնյակի հասնող քիմիական միացությունների տարբեր ընտանիքներ, որոնց դերը բուսական և կենդանական աշխարհի համար հսկայական է: Նրանք բնության մեջ կատարում են կարևոր ֆիզիոլոգիական ֆունկցիա: Դրանց մեջ առավել կարևոր են իզոտոպները և նրան մոտ կանգնած միացությունները: Բնության մեջ բազմաթիվ են իզոտոպները, որոնք լայն տարածված են գրեթե ամենուր: Դրանք պարբերաբար կրկնվող կառուցվածք ունեցող քիմիկատներ են և համեմատաբար պարզ կենսասինթեզի արդյունք:

Այսօր կարելի է ապացուցված համարել, որ բուսական և կենդանական օրգանիզմներում մի շարք քիմիական միացությունների առկայությունը ապահովում է փոխադարձ կապերը բուսական աշխարհի ներկայացուցիչների և կենդանիների միջև:

Բույսերի և կենդանիների կողմից արտադրվող այսպես կոչված երկրորդական մետաբոլիտները բաժանվում են ֆերոմոնների և հորմոնների: Առաջինները հայտնաբերվել են սնկերի, բազմոտանիների, ձկների, կաթնասունների մոտ: Իզոպրենոիդները լինելով բույսերի և միջատների ֆերոմոններ կամ հորմոններ, միաժամանակ ինֆորմացիա կրողներ են: Միջատների որոշ տեսակներ արտադրում են տոքսիկ նյութեր, որոնք ընդրանց պաշտպանում են մրգակեր գիշատիչներից: Դա հաստատվում է տարբեր տիպի մորեխների օրինակով: Հետազոտությունները վկայում են, որ որոշակի փաստեր առկա են բույսերի և միջատների փոխհարաբերություններում. միջատները հորմոնների նախանյութերն ստանում են բույսերից, հետագայում որոշակի ձևափոխությունից հետո կարողանում են օգտագործել որպես պաշտպանական միջոց, որպես սեռական ֆերոմոնների վախեցնող միջոցներ:

Դրանց հայտնաբերումը հրնարավորություն է տալիս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հացը ազգություն է պահանջում

Ես շատ կուզեի, որ այս նամակը գրելու անհրաժեշտությունը չլիներ: Սակայն ադիթը այնքան էր պարադոքսալ և անտրամաբանական, որ որոշեցի իմ խորհրդածությունները կիսել մեր թերթի ընթերցողների հետ:

Հիմա վերը հիշածս ադիթի մասին: Մենք, բոլոր մահկանացուներս, հաց ենք ուտում և նշանակում է, որ այն ինչ-որ տեղից պիտի առնենք: Իսկ քանի որ հացը դեռևս պետական մենաշնորհ է, այն մենք գնում ենք հացի խանութներից: Եվ ահա հենց այդ խանութներից մեկում, որտեղից օգտվում ենք մենք, ես լսեցի մի բարեկիրթ ու մտավորական կնոջ տրտունջը.

— Երևանի թե հացը նորից կտրոնով դարձնեն:

Հավատացած եմ, որ զարմացաք: Իհարկե, մենք որ հեռու և մոտ անցյալում հարկադրված ենք եղել օգտվել ամեն տեսակ կտրոններից և շատ երազել այն օրը, երբ դրանք չեն լինի, հանկարծ լսում ենք «կտրոնին» վերադառնալու աղերս: Այո՛, պարադոքսալ է, այո՛, անտրամաբանական է: Բայց չէ՞ որ այսօր այդպես են մտածում բազում-բազում մեր համաքաղաքացիներ, որոնց համար հաց գնելը (խանութից) դարձել է հոգս ու պրոբլեմ: Եվ սա ոչ թե նրա համար, որ հանրապետությունում այլուր չկա կամ հացի գործարանները ու փռերը հաց քիչ են թխում: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Եվ, այնուամենայնիվ, օրվա մեծ մասը հացի խանութները դատարկ են:

Ինչո՞ւ է այսպես: Այն պարզ պատճառով, որ հացի խանութների վաճառողները իրենց տնօրենների անմիջական գիտությամբ և անգամ հանձնարարությամբ ստեղծել են իրենց «բիզնեսը»:

Ահա ձեզ այդ «բիզնեսի» մի փոքրիկ պատկեր, որ բաց աչքերով կրկնվում է բոլոր խանութներում:

Կանգնում է հացի մեքենան, սկսում են դատարկել: Հացի մի մասը հայտնվում է վաճառասեղանին, իսկ մյուս մասը (գուցե ավելի մեծ) լցվում է պարկերի ու մեծաչափ պայուսակների մեջ: Իսկ խանութում հացը քիչ հետո վերջանում է՝ մի կերպ բավարարելով միայն հերթ կանգնած քաղաքացիներին: Այստեղից էլ հացի խանութներում հերթերի գոյացումը: Ու նաև այն, որ շատ կարճ ժամանակ հետո, եթե փորձես այդ խանութից հաց գնել, սուրճ ըմպող վաճառողները առանց դեմքիդ նայելու կշպրտեն.

— Վերջացել է:

Եվ այսպես բոլոր խանութներում: Սակայն վերջերս այդ նույն խանութներում սկսել են քաղաքացիներին առաջարկել ինչ-որ մի «ձեռներեցի» թխած հացը, թանկ գնով: Ինչպիսի ցինիզմ: Եթե չես ուզում անհաց մնալ, պիտի գնես: Իսկ եթե խանութից չես ուզում, գնա «հացի շուկա»:

«Հացի շուկաները» այսօր մեր քաղաքի տեսարժան վայրերից են և դրանց թիվն ավելանում է ու ավելանում: Տեսականին՝ բազմազան, գները՝ միատեսակ և բարձր, վաճառողները՝ կանայք, տղամարդիկ, ինչպես ասվեց, ինչպես գրվեց: Ամենախանդեպ մեծ զարգացում ապրեց չհագեցած ու բարձրատոլեկուլյար միացությունների քիմիան և որպես առանձին ուղղություն բյուրեղացավ կենսաբանորեն ակտիվ նյութերի քիմիան: Հիմք դրվեց մի նոր, չափազանց հետաքրքիր ու կարևոր ուղղության՝ էլեմենտաօրգանական միացությունների քիմիային, հետազոտություններ կատարվեցին ֆոսֆոր, ծծումբ և բոլոր օրգանական միացությունների բնագավառում:

Վերջին տասնամյակները բնորոշվում են բնական միացությունների բիոսինթեզի և հատկապես նրանց ու կենդանական աշխարհի փոխադարձ կապի արդարանման առաջընթացով: Արդյունքում, այսօր հայտնի են մեկ տասնյակի հասնող քիմիական միացությունների տարբեր ընտանիքներ, որոնց դերը բուսական և կենդանական աշխարհի համար հսկայական է: Նրանք բնության մեջ կատարում են կարևոր ֆիզիոլոգիական ֆունկցիա: Դրանց մեջ առավել կարևոր են իզոտոպները և նրան մոտ կանգնած միացությունները: Բնության մեջ բազմաթիվ են իզոտոպները, որոնք լայն տարածված են գրեթե ամենուր: Դրանք պարբերաբար կրկնվող կառուցվածք ունեցող քիմիկատներ են և համեմատաբար պարզ կենսասինթեզի արդյունք:

.50 ՏԱՐԻ ԵՎ 50 ԾՐԱԳԻՐ

Վերջերս հանդիսավորությամբ նշվեց ՄԱԿ-ի 50-ամյակը: Նաև ասեմ, որ մեր հանրապետությունում սկսել է գործել ՄԱԿ-ի հայաստանյան ասոցիացիան: Սակայն բոլորը չէ, որ գիտեն, թե հիմնականում ինչ ծրագրեր ունի ՄԱԿ-ը, ինչպես է իրագործվում նրա հիմնական առաքելությունը: Հնարավորության դեպքում խնդրում եմ պատմեմ ՄԱԿ-ի մասին:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ուլանող

Միավորված ազգերի կազմակերպությունը 50 տարեկան է: Այդ առթիվ մեծ հանդիսություններ եղան Նյու Յորքում, որին շատ երկրների պատվիրակությունների հետ մասնակցում էին նաև Հայաստանի ներկայացուցիչները, որպես ՄԱԿ-ի մշտական անդամ երկրի պատվիրակներ: Ստորև ամփոփ կերպով պատմում ենք ՄԱԿ-ի հիմնական ծրագրերի մասին, որը, հարգելի Ա. Վարդանյան, մասամբ կբավարարի ձեր և մեր մյուս ընթերցողների հետաքրքրասիրությունը:

ՄԱԿ- ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻՆ ԵՎ ՀԻՍՈՒՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Միավորված ազգերի կազմակերպությունը գործունեություն է ծավալում ամբողջ աշխարհում, մարդկանց կյանքին առնչվող գրեթե բոլոր բնագավառներում: Ի լրումն խաղաղապահ և բախումների լուծման ֆորում լինելու իր դերին, ՄԱԿ-ը և նրա գործակալությունների ընտանիքն իրենց մարդկային ու նյութական միջոցների մեծ մասը տրամադրում են սոցիալ-տնտեսական բարեփոխումների հավասարակշռված ու կայուն գործընթացին. որը մշտապես եղել է ու կա ՄԱԿ-ի կանոնադրության հիմնարար ու պարտադիր մասը:

1. Խաղաղության ու անվտանգության պահպանում— 1948 թվականից ի վեր, ավելի քան 35 դիտորդական առաքելություն ու խաղաղարար ուժերի տեղակայում ապահովելով, ՄԱԿ-ը խաղաղություն է վերահաստատել: Այդ կերպ հնարավոր դարձած բանակցությունների շնորհիվ միլիոնավոր մարդիկ զերծ են մնացել բախումներին զոհ դառնալուց: Այժմ գործող խաղաղապահ ուժերը 16-ն են:

2. Խաղաղարարություն— 1945 թվականից ի վեր, ՄԱԿ-ը հավատարմագրված է եղել բանակցություններ վարել բազմաթիվ խաղաղ կարգավորումների վերաբերյալ, որոնցով վերջ է տրվել տարածաշրջանային բախումների, կանխվել են այլևայլ բախումներ:

3. Միջազգային իրավունքի ստեղծում— Կազմրվել են ավելի քան 300 միջազգային պայմանագրեր՝ սկսած մարդու իրավունքներից մինչև տիեզերքի ու ծովահատակի վերաբերյալ թեմաներով:

4. Ժողովրդավարության զարգացում— Ավելի քան 45 երկրներում ՄԱԿ-ը քաղաքացիներին օժանդակել է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու գործում:

5. Զարգացման օժանդակություն— ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, որ իրականացվում է ավելի քան 170 անդամ պետություններում և ՄԱԿ-ի այլ գործակալությունների հետ սերտ համագործակցությամբ, մշակում և իրագործում է գյուղատնտեսական, արդյունաբերական, կրթական և շրջակա միջավայրի պահպանման ծրագրեր: Ունենալով տարեկան 1,3 միլիարդ ամերիկյան դոլար, ՄԱԿ-ը հովանավորում է հազարավոր ծրագրեր ու նախաձեռնություններ:

6. Մարդու իրավունքների զարգացում— 1948 թվականին ընդունելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ՄԱԿ-ն օգնել է բանակցել քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների վերաբերյալ ավելի քան 80 ընդարձակ պայմանագրերի շուրջ:

7. Շրջակա միջավայրի պահպանում— 1992 թվականին Ռիո դե Ժանեյրոյում կայացած «Հողագնդի բարձրը մակարդակի հանդիպմանը», ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի պահպանմանն ու զարգացմանը նվիրված խորհրդաժողովում բոլոր անդամ պետություններն ընդունեցին Ռիո դե Ժանեյրոյի հռչակագիրը, Օրակարգ 21-ը, անտառների սկզբունքները, Կլիմայական և Կենսաբազմազանության կոնվենցիաները: Ներկայումս ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներքո գործում է Գլոբալ հանդիսավոր դրամական հիմնադրամ, որի միջոցներն ուղղվում են զարգացող երկրներ: Ներկայումս ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներքո գործում է Գլոբալ հանդիսավոր դրամական հիմնադրամ, որի միջոցներն ուղղվում են զարգացող երկրներ:

պարզաբանել բույսերի և միջատների փոխհարաբերությունը, ինչպես նաև կենդանիների և բույսերի ներքին փոխազդեցությունը:

— Գիտատեխնիկական արդի առաջընթացի խոշոր նվաճումներից մեկն էլ բուսական և կենդանական օրգանիզմների համար չափազանց կարևոր ֆիզիոլոգիական ֆունկցիա կատարող բնական միացությունների հայտնաբերումն է, նրանց լաբորատոր սինթեզի կազմակերպումը: Հետազոտողների երկարատև ու հիմնավոր աշխատանքի շնորհիվ պարզվեց նոր բարդ բնական միացությունների կառուցվածքը՝ բույսերի կողմից և կենդանիների զարգացման ընկալման մոլեկուլներ արտադրելու ունակությունը: Ի՞նչ է արվել ֆերոմոնները փորձանոթից կյանք, գործնական կիրառություն տեղափոխելու ուղղությամբ: Միովբանիվ՝ ֆերոմոնները կյանքում:

— Ուշագրավ հարց է: Բնական միացությունների մի խմբի գիտնականները ֆերոմոններ անվանեցին: Ֆերոմոն բառը հունական ծագում ունի. նշանակում է տեղափոխել, գրգռել: Այսօր հայտնի են ճանաչման, հաղորդակցման, նշանի, պաշտպանության, սարսափի, սեռական և այլ ֆերոմոններ: Բնական միացությունների կառուցվածքի հաստատումը և սինթեզումը ժամանակակից օրգանական քիմիայի առաջնային պրոբլեմներից է, որի լուծումը հսկայական նշանակություն ունի: Նրանց ազդեցությամբ կարելի է կարգավորել կենդանիների քանակն ու աճը, պայքարել գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ՝ առանց վնասելու շրջապատն ու մարդկանց: Կենդանիները դա բուսական աշխարհից են վերցնում, վերակառուցումից հետո արտազատում են որպես հրսկայական ընկալման մոլեկուլներ: Ասել է՝ քիմիական այդ նյութերի օգտագործումով կարելի է սահմանափակել կամ կարգավորել վնասակար որդերի, միջատների, բզեզների, դիկ, ծերեր, ջահելներ, որոնք ձեռքից-ձեռք են փախցնում հանախորդին՝ առաջարկելով թարմը, տաքը, ընտիրը:

Հացը շարված է քարերի վրա, լցված կեղտոտ պայուսակների ու պարկերի մեջ, ձեռքներին բռնած ու չգիտես՝ լրացվա՞ծ են, արդյոք, այդ ձեռքերը, այդ հագուստները, առո՞ղջ են, արդյոք, այդ մարդիկ. այլ խոսքով՝ հակահիգիենան կատարյալ է: Դարեր շարունակ հայ մարդը գետնին ընկած հացի կտոր տեսնելիս, վերցնում էր ու զգուշությամբ մի կողմ դնում, ասելով, որ մեղք է: Իսկ հիմա հացի կտոր չէ, հազարավոր բոքոններ գետնին են թափված ու վաճառվում են: Ի՞նչ սրբություն, ի՞նչ մեղք, երբ մեջտեղում շահն է:

Ես գիտեմ, որ հաց վաճառելը շատ միայնակների ու ծերերի համար ապրուստի միակ միջոցն է: Եվ ոչինչ չունեմ այդ խեղճուկրակների դեմ: Սակայն հացի առևտուրն այսօր այլևս այդ անապահով մարդկանց օրվա հացը չէ, այլ «բիզնես», որում ընդգրկված կրծողների ամբ: Դրա շնորհիվ ժողովրդական տնտեսությունը հարյուրավոր տոննա քիմիկատ է խնայում: Ուշագրավ է նաև այն, որ տվյալ ֆերոմոնը հատուկ է միայն որոշակի միջատի, կրծողի, և այս կամ այն ֆերոմոնի օգնությամբ կարելի է ոչ միայն վնասատուի դեմ պայքար կազմակերպել, այլև պաշտպանել մարդուն՝ որդերի, կրծողների միջոցով կենդանական աշխարհ փոխանցվող շատ հիվանդություններից:

Քիմիական պայքարի մեթոդը մեծ տարածում և ճանաչում էր ստացել մեզ մոտ և արտասահմանում: Սակայն պարզվեց, որ պեստիցիդների տնական գործածումը հանգեցնում է նաև անցանկալի հետևանքների, ազդում է մարդկանց, շրջապատող միջավայրի վրա: Շատ տգեր ու միջատներ ժամանակի ընթացքում ձեռք են բերում կայունություն՝ պեստիցիդների հանդեպ:

Գիտնականների մի խումբ այդ երևույթի դեմ պայքարի գլխավոր ուղղությունը համարեց գյուղատնտեսական վնասատուների դեմ քիմիկոկենսաբանական միջոցների կիրառումը: Գիտական հետազոտությունների և փորձարկումների ընթացքում բազում դրժվարություններ ծագեցին, բայց ատիճանաբար հաղթահարվեցին դրանք: Իմ ղեկավարած լաբորատորիայի անձնակազմը՝ քիմիական գիտությունների թեկնածուներ, ավագ գիտաշխատողներ Գագիկ Մելիքյանը, Աշոտ Խրիմյանը, Ժորա Զոթանյանը, մյուսները ջանք ու եռանդ չընխնայեցին առաջադրված խնդիրը լուծելու համար: Համատեղ ու համերաշխ աշխատանքի շնորհիվ շուտով քիմիական փորձանոթներում տարբեր նյութերից ծնվեցին ֆերոմոններ, սինթեզվեցին գյուղատնտեսական վնասատուներից խաղողի ողկույզների, աշնանացանի բվեճի և խնձորի պտղակերի ֆերոմոնները: Այն փորձարկվեց մի խումբ քիմիկոսների և բույսերի պաշտպանության գիտահետազոտական հիմնարկի լաբորատորիայի մասնագետների հետ համատեղ: Ստեղծվեց «Արարատ» նյութը, որը ներդրվեց մեր հանրապետության գյուղատնտեսության մեջ՝ հիանալի արդյունքով: Քիմիական կենսաբանության զինանոցը հարստացավ պաշտպանական մի նոր միջոցով:

— Պարոն տնօրեն, նյութը ստեղծվեց: Սակայն գիտական որոնումները դրանով չսահմանափակվեցին, անշուշտ:

— Դուք ճիշտ եք: Որոնումները շարունակվեցին և մեր հաջորդ քայլը հանդիսացավ նյութի օգնությամբ ողկույզակերի զարգացման ընկատմամբ վերահսկողություն սահմանելը, վնասատուների դեմ ինտեգրալ պայքարի ժամանակ արդյունավետ ժամկետներ սահմանելը: Ստեղծեցինք ֆերոմոնային թակարդներ, որոնք կախեցինք խաղողի այգիներում: Փորձարկումները հաջող ու արդյունավետ անցան: Որոշվեց որպես ազդանշանի միջոց օգտագործելու դեպքում մեկ ֆերոմոնային թակարդ կախել 5—10 հեկտար տարածության վրա, իսկ արուներին վերացնելու համար մեկ հեկտարում՝ 10—15 թակարդ: Այսպիսով «Արարատ»-ը ներդրվեց հանրապետության 17 հազար հեկտար խաղողի այգիներում՝ որպես անհազանգող միջոց, իսկ 2500-ում՝ արուներին վերացնելու:

Ֆերոմոնների միլիգրամները փոխարինում են հազարավոր տոննա թունաքիմիկատների և հարյուրավոր կիլոգրամ պեստիցիդների:

Պատահական չէր, որ «Արարատ»-ը մեծ ճանաչման արժանացավ, ձեռք բերեց «հեղինակություն» և շատ երկրներ նրա ձեռքբերման հայտեր ներկայացրին:

— Աշնանացանի հսկայական տարածություններ ունենք: Ի՞նչ էր արվում դրանց բվեճի ֆերոմոնի ակտիվ կիրառման գործում:

— Իրոք, աշնանացանի բվեճը վնաս է հասցնում հացահատիկային, բանջարանոցային, ինչպես նաև տեխնիկական մշակաբույսերին: Վերջին տարիներին տասնյակ նմուշներ՝ «ոտեգիր» ստանալով, փորձարկվեցին դաշտային պայմաններում: Պարզվեց, որ դրանցից չորսը ցուցաբերում է սեռական ֆերոմոնային ակտիվություն: Տնտեսագրտական հաշվարկները ցույց տվեցին, որ պեստիցիդների գիտականորեն հիմնավորված օջախային կիրառման շնորհիվ հնարավոր է շուրջ 30 տոկոսով կրճատել մեզ մոտ յուրաքանչյուր տարի իրականացվող քիմիական մշակումների պայքարի աշխատանքները, դրանով իսկ բարելավել գյուղատնտեսության և անտառահանդերի ֆիտոսանիտարական վիճակը, ապահովել շրջակա միջավայրի և կենսոլորտի անվտանգությունը: Ինստիտուտի չհագեցած միացությունների լաբորատորիայում շարունակվեցին հետազոտությունները նոնան, դեղձի, ընկույզի վնասատուների ֆերոմոնների սինթեզման մեթոդներ մշակելու ուղղությամբ:

— Պարոն Բաղանյան, Դուք մանրամասն պատմեցիք անձամբ Ձեր մշակած թեմայի կիրառական նշանակության մասին: Հետաքրքիր է իմանալ, թե գյուղատնտեսության մեջ կատարվող վերափոխումների այսօրվա պայմաններում դրանք ինչպե՞ս են կիրառվում:

— Մասնավորն այսօր նոր հոգսեր ունի, որոնք նրա համար ավելի կարևոր են, քան թունաքիմիկատները ֆերոմոններով փոխարինել: Արևմուտքում ուրիշ է. ֆերոմոնալ թակարդի միջոցով պահված միրգը երկու անգամ ավելի թանկ է՝ թունաքիմիկատով մշակվածից: Սա զարգացման մակարդակ է, մշակման կուլտուրա, որը մենք ձեռք էինք բերել քրտնաջան աշխատանքով և արժանացել միջազգային ճանաչման: Մեզ մոտ այսօր բացակայում է աշխատանքի և արտադրության կուլտուրան: Արտադրությունն է ապահովում հանրապետության տնտեսական կյանքի առաջնային խնդիրները: Օրինակ, եթե մենք արտադրենք և վաճառենք մեկ կիլոգրամ ֆերոմոն, կստանանք 450 հազար դոլլար եկամուտ: Իսկ եթե դա արտադրենք որպես պրեպարատ՝ տասն անգամ ավելի շատ եկամուտ կստանանք: Հիմա գործնականում հնարավոր է ֆերոմոնի արտադրությունը: Հիմա էլ մենք որոշ նյութեր արտադրում և վաճառում ենք: Բայց արտադրությունը արդեն գիտաշխատողի խնդիր չէ, այլ՝ իշխանությունների, արտադրությունը կազմակերպողի և ինչ խոսք՝ գործարար մարդկանց:

— Ձեր ղեկավարած գիտական օջախում որոնումներն ու ծրագրերը շատ են, սակայն, ինչպես ես հասկացա, դրանց արագ իրագործմանը խանգարում են հետազոտական աշխատանքների ցածր տեմպերը (եթե չասենք՝ բարձիթողի վիճակը), արտադրական անհրաժեշտ բազայի բացակայությունը և առաջատար մասնագետների մշտական արտահոսքը: Ձեր «պատրաստած» 2 դոկտորներից և 27 գիտության թեկնածուներից միայն յոթն են մնացել «գիտական ճակատամարտի» առաջնագծում: Մյուսները ցածր աշխատավարձի պատճառով հեռացել են: 147 գիտաշխատողից մնացել է 68-ը: Ֆինանսական նոր տարուց գուցե կրճատումներ լինեն: Դա ինչի՞ կարող է հանգեցնել:

— Պարոն Կանցյան, ես լավատես եմ և լիահույս, որ վատթարը չի պատահի, իսկ եթե պատահի՝ կդիմակայենք: Կարծում եմ, որ «վերևներն» ու «ներքևները» ձեռք-ձեռք տված լրջորեն կմտածեն ազգի, նրա տնտեսական զարգացման, ասել է՝ մեր նորաստեղծ, անկախ Հայաստանի Հանրապետության հետագա հզորացման մասին:

— Շնորհակալությո՛ւն:

Հարցազրույցը վարեց
Լևոն ԿԱՆՑՅԱՆԸ
(Մեր թղթակից)

դիկ, ծերեր, ջահելներ, որոնք ձեռքից-ձեռք են փախցնում հանախորդին՝ առաջարկելով թարմը, տաքը, ընտիրը:

Հացը շարված է քարերի վրա, լցված կեղտոտ պայուսակների ու պարկերի մեջ, ձեռքներին բռնած ու չգիտես՝ լրացվա՞ծ են, արդյոք, այդ ձեռքերը, այդ հագուստները, առո՞ղջ են, արդյոք, այդ մարդիկ. այլ խոսքով՝ հակահիգիենան կատարյալ է: Դարեր շարունակ հայ մարդը գետնին ընկած հացի կտոր տեսնելիս, վերցնում էր ու զգուշությամբ մի կողմ դնում, ասելով, որ մեղք է: Իսկ հիմա հացի կտոր չէ, հազարավոր բոքոններ գետնին են թափված ու վաճառվում են: Ի՞նչ սրբություն, ի՞նչ մեղք, երբ մեջտեղում շահն է:

Ես գիտեմ, որ հաց վաճառելը շատ միայնակների ու ծերերի համար ապրուստի միակ միջոցն է: Եվ ոչինչ չունեմ այդ խեղճուկրակների դեմ: Սակայն հացի առևտուրն այսօր այլևս այդ անապահով մարդկանց օրվա հացը չէ, այլ «բիզնես», որում ընդգրկված են այսպես կոչված «ձեռներեցներ», որոնք տնօրինում են տարածքներ, որոնք որոշում են գները, որոնք տուրք են հավաքում հացի առևտրականներից և որոնք հալածում կամ ֆիզիկական դատաստան են տեսնում այն խեղճերի նկատմամբ, որոնք իսկապես հացի վաճառքով օրվա հաց են վաստակում:

Եվ այս բոլորը կատարվում է տեղական մարմինների, տարբեր ծառայությունների աչքի առաջ:

Հիմա կասեք՝ «շուկայական հարաբերություններ են», ինչ կարող ես անել: Այո, ոչինչ, եթե իսկապես այդ «շուկայական հարաբերությունները» չեն շփոթում բազարայինի հետ:

Եթե մարդիկ զբաղվում են մերձավոր կամ հեռու արտասահմանի ապրանքների վերավաճառքով, երևի թե ձեռներեցության կամ բիզնեսի ձև է: Բայց եթե վերավաճառում են մի բան, որ առայսօր դեռ պետական մենաշնորհ է՝ խարդախ միջոցներով դրամ վաստակել է, որ նախկինում կոչվում էր սպեկուլյացիա և խստորեն պատժվում:

Ես չեմ հասկանում, հնարավո՞ր է արդյոք պատկերացնել, որ արտասահմանյան որևէ երկրում (որոնց մենք շատ ենք ուզում նմանվել) իրեն հարգող ոմն արտադրության տեր կամ սեփականատեր հանդուրժի, որ իր իսկ ապրանքը հենց տեղում ինչ-որ մարդիկ վաճառեն բարձր գնով և այն էլ՝ գետնին, ցեխաջրերի ու փոշու մեջ փռած:

Շուկայական արտասահմանում կծիծաղեին անգամ այս հարցադրման համար: Իսկ մեր հանրապետությունում դա ոչ մեկի չի անհանգստացնում: Եվ ծաղկում է «հացի բիզնեսը»՝ անսպառ շահույթ բերելով հացի խանութների տնօրեններին, սեփականատերերին, վաճառողներին և անշուշտ՝ «հացի բիզնեսի» տերերին (չասենք՝ մաֆիա):

Իհարկե, կարելի էր անտարբեր անցնել այս երևույթի կողքով, եթե այն քաղաքում չստեղծեր հաց ձեռք բերելու պրոբլեմ և մարդիկ երազեին կտրոնով հաց առնելու ժամանակները, եթե հազարավոր մարդիկ այդ պատճառով հարկադրված չլինեին իրենց սուղ միջոցներով կըրկնակի ավել վճարել օրվա հացի համար, եթե այդ, բառացի իմաստով, անմաքուր և կեղտոտ «բիզնեսը» չսպառնար մի օր հիվանդություն ու համաճարակ տարածել մարդկանց մեջ:

Ի դեպ, այս վտանգն ըստպառնում է ոչ միայն հացի ապօրինի «բիզնեսը»: Մեր քաղաքը ծայրից-ծայր ծածկված է սեղանիկներով և առևտրի կետերով, որտեղ բաց վիճակում վաճառվում են անփաթեթ սննդամթերքի ամենատարբեր տեսակներ՝ պանիր, միս, երշիկ, կարագ, շաքարավազ, թխվածքներ և այլն և այլն: Եվ այդ «դախլերի» ետևում կանգնած նորահայտ չարչիները՝ հագնված ով ինչպես կարող է և ուզում է, հաճախ չսափրված ու մազակալած դեմքերով, մերկ ձեռքերով վերցնում են սննդամթերքը, ջոկչկում, կտրում, կշռում և հրամցնում գնորդին:

Կար ժամանակ, երբ առևտրի ցանկացած աշխատող, ամիսը մեկ, պարտադիր բժշկական քննության էր ենթարկվում, որովհետև գործ ուներ սննդի հետ: Եվ հասկանալի է, թե ինչո՞ւ: Այսօր հազարավոր առևտրականներ քեզ սնունդ են վաճառում և անհայտ է՝ ինչո՞վ են հիվանդ այդ մարդիկ կամ գոնե լվացվե՞լ են այդ օրը: Եվ սա ոչ մեկի չի անհանգստացնում:

Ասում են, թե մենք զարմանալի դիմացկուն ազգ ենք: Բայց մի՞թե որևէ մեկը պարզել է, թե մեր հանրապետությունում ինչո՞ւ են անընդհատ պտտվում դեղնախտը, թոքախտը, մանկական այլևայլ ինֆեկցիոն հիվանդությունները, ինչո՞ւ գրիպի մի տեսակին փոխարինում է մեկ այլ տեսակը, ինչո՞ւ են շատացել ալերգիկ երևույթները, ստամոքսի խանգարումներն ու տագնապալի այլ հիվանդություններ: Չէ՛, մենք այդքան էլ դիմացկուն չենք, հավատացե՛ք:

Անուշավան
ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

դունեցին «Օրակարգ—21» ծրագրային փաստաթուղթը, որն օժանդակում է կայուն առաջընթացի, տնտեսական զարգացման, միաժամանակ գալիք սերունդների համար պաշտպանում ու պահպանում է բնական պաշարները:

8. Միջազգային գենեֆի տարածման կանխում— *90 երկրներում միջուկային ռեակտորների պարբերական ստուգումների շնորհիվ Միջուկային էներգիայի միջազգային գործակալությունը (ՄԷՄԳ) օգնել է նվազեցնել միջուկային պատերազմի սպառնալիքը, ապահովելով, որ միջուկային նյութերը չօգտագործվեն ռազմական նպատակների համար:*

9. *ՄԱԿ-ը վճռորոշ դեր է կատարել ապազաղութացման պատմական գործընթացը խրախուսելու գործում, հանգեցնելով ավելի քան 80 երկրների անկախացման:*

10. Խոշոր միջազգային վեճերի կարգավորում— *Միջազգային դատարանն օգնել է կարգավորել միջազգային վեճեր, որոնք վերաբերում են տարածքային, նկատելությունների ներքին գործերին չմիջամտելու, դիվանագիտական հարաբերությունների, պատանդներ վերցնելու, քաղաքական ապաստանի. իրավունքի, մուտքի և տնտեսական իրավունքների ոլորտներին:*

11. Օգնություն հարավաֆրիկյան խտրականությանը վերջ դնելուն— *Սկսած այնպիսի միջոցառումից, ինչպիսին զենքի էմբարգոն է ու վերջացրած խտրարարական մարգական միջոցառումների դեմ կոնվենցիայով, ՄԱԿ-ը կարևոր գործոն է եղել խտրարարությանը վերջ դնելու գործում: Գլխավոր ասամբլեան խտրարարությունը պիտակել է որպես «հանցանք՝ ընդդեմ մարդկության»:*

12. Մարդասիրական օգնություն բախումներից տուժածների համար— *ՄԱԿ-ի Փախստականների գծով բարձրագույն հանձնակատարը կազմակերպության այլ գործակալությունների հետ համատեղ միջազգային պաշտպանություն ու օգնություն է ապահովել պատերազմից, սովից ու հետապնդումից փախչող տասնյակ միլիոնավոր փախստականների: Ներկայումս ՄԱԿ-ի Փախստականների գծով բարձրագույն հանձնակատարի օժանդակությունից օգտվում է ավելի քան 27 միլիոն մարդ, այդ թվում՝ փախստականներ և հար ու նման դրության մեջ հայտնված այլ խմբեր՝ վերադարձած փախստականներ, միևնույն երկրի ներսում տեղահանման ենթարկվածներ:*

13. Օգնություն Պաղեստինի փախստականներին— *1959 թվականից ի վեր, ՄԱԿ-ի Օգնություն և աշխատանք Պաղեստինի փախստականների համար գործակալությունը Մերձավոր Արևելքում մշտական ու կայուն օգնություն է ցուցաբերել, ապահովելով ուսուցում, հիմնական առողջապահական ու սոցիալական ծառայություններ, մարդասիրական օգնություն:*

14. Գյուղատնտեսական արտադրության ավելացում— *ՄԱԿ-ի Սննդի և գյուղատնտեսության կազմակերպությունը հազարավոր ծրագրերի համար ապահովել է հետազոտություն, փորձագիտական օժանդակություն և ֆինանսավորում, դրանով բարելավելով փոքր մենատնտեսների ստացած բերքը, եկամուտները:*

15. Քոռեկի սովի ու աղքատության վերացում զարգացող երկրներում— *Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամը մշակել է ամենաաղքատ ու արտոնազուրկ խմբերին վարկեր, հաճախ շատ փոքր գումարներ տրամադրելու համակարգ, որից շահել է շուրջ 100 զարգացող երկրների ավելի քան 230 միլիոն մարդ: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրն ապահովում է մոլորակին տրամադրվող սննդի մեկ չորրորդը:*

16. Աֆրիկայի զարգացումը ուշադրության կենտրոնում— *1986 թվականին ՄԱԿ-ը հրավիրեց Գլխավոր ասամբլեայի առաջին հատուկ նստաշրջանը՝ աշխարհի հատկապես այդ շրջանի համար միջազգային օժանդակություն ապահովելու համար և ընդունեց Աֆրիկայի տնտեսության վերականգնման ու զարգացման գործողության ծրագիր: Զարգացման միջոցառումներին նոր թափ հաղորդելու համար 1991 թվականին Ասամբլեան ընդունեց Աֆրիկայի զարգացման նոր օրակարգը:*

17. Կանանց իրավունքների առաջադրում— *Սկսած 1975 թվականին կայացած կանանց առաջին խորհրդաժողովից, որով նշանավորվեց կանանց՝ ՄԱԿ-ի հովանավորած միջազգային տասնամյակը, կազմակերպություններ նպաստել է կանանց առաջընթացին ու իրավունքներին նվիրված օրակարգի հաստատմանը: Բացառապես կանանց խնդիրներով են զբաղվում ՄԱԿ-ի երկու գործակալություններ՝ կանանց զարգացման հիմնադրամը և Կանանց առաջընթացի միջազգային հետազոտությունների և ուսուցման ինստիտուտը,*

18. Խմելու ջրի ապահովումը— *Աշխատելով կառավարությունների ու հասարակական կազմակերպությունների հետ, ՄԱԿ-ի գործակալությունները վերջին տասնամյակում գյուղական շրջաններում խմելու ջուր են ապահովել 1,3 միլիարդ մարդու համար:*

(Շարունակելի)

ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ



Ամբողջ աշխարհում է հայտնի Հայաստանի գիտահետազոտական կարևորագույն օջախներից մեկը՝ Մատենադարանը: Թեև այն նաև հանրապետության տեսարժան վայրերից է, բայց նրա հիմնական առաքելությունը հին ձեռագրերի պահպանումն ու ուսումնասիրությունն է:

Ճգնաժամը, միջոցների բացակայությունը և այլ դժվարություններն ինչպե՞ս են ազդել Մատենադարանի գործունեության վրա: Ահա այս մտահոգությամբ «Նպատակ» թերթի սեփական թղթակից Արամ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ այցելեց Մատենադարան և հարցազրույց ունեցավ նրա տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Սեն ԱՐԵՎՇԱՏՅԱՆի հետ:

— Մատենադարանը հայ հին մշակույթն ուսումնասիրող գիտահետազոտական ինստիտուտ է, որտեղ պահվում են հազարավոր ձեռագիր մատյաններ: Կուզենայի իմանալ, թե ձեր գիտնականներն ինչպիսի՞ նոր գործերի վրա են աշխատում:

— Տարիների ընթացքում Մատենադարանը շարունակել է իր աշխատանքը, իր գործունեությունը, և մեր գիտական թեմատիկան ինչպես նախորդ տասնամյակներում, այնպես էլ այժմ շարունակում է հարստանալ, նորոգվել: Պատրաստվում են բազմաթիվ գործեր, բնագրեր, մենագրական հետազոտություններ, թարգմանություններ և այլն: Բայց ես մի քանի գործեր կցանկանայի առանձնացնել, կապելով դրանք հիմնականում մոտեցող Հայոց դարձի 1700-ամյակի հետ: Դրանցից է Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»: Պատրաստվում է այդ գործի քննական բնագրի վերահրատարակությունը, որտեղ արվել են լրացումներ: 20-րդ դարի սկզբներին հրատարակվել էին նրա քննական բնագրերը, դրանից հետո երևան են եկել տարբեր պատառիկներ, ձեռագրեր, որոնք հնարավորություններ են տալիս լրացումներ կատարելու: Ահա այդ ուղղությամբ մեզ մոտ աշխատանք է սկսվել և հույս ունենք, որ մինչև նոր դարասկիզբ այդ գործը կավարտվի:

Պատրաստվում է նաև Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունը, որը Մատենադարանը կատարում է ՀՀԱԱ գրականության ինստիտուտի հետ միասին:

Մյուս թեման, որի մասին արժե խոսել, հենց այդ մեծ հոբելյանի առիթով, դա «Աստվածաշնչի» քննական բնագրի հրատարակությունն է, որը ինչպես գիտեք հանդիսանում է թարգմանական գրականության կարևորագույն հուշարձանը: Առաջին թարգմանությունն է, որ հենց գրերի գյուտից հետո Սուրբ Թարգմանիչները սկսել էին սկզբից՝ փութանագիր (արագ կատարված թարգմանություն), որը ասորերենից էր: Երկրորդ վերջնական թարգմանությունը 430-ական թվականներին հունարեն բնագրից է կատարված: Եվ ահա մեր նպատակն է «Աստվածաշունչը» հրատարակել իր քննական բնագրով և դնել գիտական շրջանառության մեջ, ընթերցողների սեղանին: Արդեն մի քանի գիրք հրատարակված է՝ «Ծննդոց», «Ելից», «Ղևտացոց» գրքերը:

Առաջին անգամ փաստորեն «Աստվածաշունչը» հրատարակվում է իր քննական բնագրով: Պատրաստ է տպագրության «Մակաբայեցոց» գիրքը, որը մենք շուտով հանձնում ենք տպագրության: Աշխատանք է տարվում մյուս գրքերի՝ մարգարությունների քննական բնագրերի վրա: Մեծ աշխատանք է տարվում «Նոր Կտակարանի», բուն քրիստոնեական ուսմունքին նվիրված քննական բնագրի պատրաստմանը, որը մեծ աշխատանք է պահանջում:

Պետք է այստեղ ես ընդգծեմ նաև մեր աշխատանքների այն բնագավառը, որն արվել է և այժմ էլ թափով առաջ է գնում: Վերջերս լույս տեսավ 5-րդ դարի ճարտասանական կարևոր մի բնագիր ձեռնարկ՝ քննական բնագրով: Դա «Պիտոյից» գիրքն է: Պատրաստվում է «Պիտոյից» գրքի թարգմանությունը, որը շատ բարդ լեզու և բովանդակություն ունի: Այժմ աշխատանք է ծավալվում Ղազար Փարպեցու երկի ռուսերեն հրատարակության վրա: Մեծ, տևական աշխատանք է պահանջվում «Դիվան հայոց պատմության» մատենաշարի համար, որի 1-ին հատորը մենք հրատարակել ենք. այժմ պատրաստ է 2-րդ հատորը, որը շարվում է և շուտով կհանձնվի տպագրության: Ուզում եմ շեշտել մի հիմնարար աշխատանք, որը չափազանց կարևոր է ոչ միայն մատենագետների, ձեռագրագետների, այլև բանասերների համար: Խոսքս մեր ձեռագրացուցակի մասին է՝ «Մայր ցուցակ Մատենադարանի ձեռագրաց»: Ասեմ, որ մոտ 30 տարի առաջ լույս է տեսել համառոտ ցուցակը՝ 2 հատորով:

«Ձեռագրաց մայր ցուցակի» 1-ին հատորը լույս է տեսել 10 տարի առաջ, այժմ պատրաստ է 2-րդ հատորը և մեկ տարի անց լույս կտեսնի, այն բավականին մեծածավալ է:

«Ձեռագրաց մայր ցուցակը» կօգնի ոչ միայն Հայաստանի, այլև տարբեր երկրների հայագետներին, բանասերներին, պատմաբաններին, արվեստագետներին, փիլիսոփաներին:

Մատենադարանի աշխատակիցները նվիրված են իրենց գործին: Բայց հետազոտությունները կատարվում են մեծ դժվարություններով: Տնտեսական այն ճգնաժամը, որը մի քանի տարի է, ինչ բոլորս զգում ենք, մեծապես դժվարացնում է աշխատությունների հրատարակման գործը: Ճիշտ է, վերջին 2—3 տարիների ընթացքում մենք մի քանի գիրք հրատարակեցինք: Վերջերս լույս տեսավ հնագույն Թոթյա ձեռագրի լուսանկարային պատճենը, 981 թվականի այդ ձեռագիրը հայերեն ամենահին Թոթյա ձեռագիրն է: 7—8 տարի տպարանում քնելուց հետո լույս տեսավ «Բանբեր Մատենադարանի» 16-րդ հատորը: Տպագրվել է նաև «Հայրեններ» հիանալի ժողովածուն: Բոլոր այդ գրքերը տպագրվում են բարեբարների օգնությամբ: Ամեն մի գրքի համար Մատենադարանի տնօրինությունը, անձամբ ես, մեծ ջանքեր ենք գործադրում գտնելու այդ բարեբարներին, համոզելու նրանց, որ դառնան որևէ ձեռագրի հովանավոր: Մեր աշխատանքը ավելի բեղմնավոր կլինի, եթե այդ բարեբարների շրջանն ընդլայնվի: Բայց հույժ ցանկալի է, որ մեր երկրի, պետության տնտեսության, ֆինանսական վիճակը լինի այնպիսին, որ մենք կարողանանք հենց պետական հովանավորությամբ շարունակել մեր գործը:

Կարծում եմ, որ հեռու չէ այդ ժամանակը: Հույս ունենանք, որ լավ կլինի:

— Պարոն Արեւշատյան, մենք ճանաչում ենք ձեզ ոչ միայն որպես Մատենադարանի տնօրեն, այլև որպես ՀՀԱԱ թղթակից-անդամ. ի՞նչ կպատմեք ձեր գիտահետազոտական աշխատանքների մասին:

— Այժմ ես աշխատում եմ երկու խոշոր թեմաների վրա: Առաջինը, դա «Հայոց փիլիսոփայության պատմության» բազմահատորյակն է, որի հեղինակային կոլեկտիվի ղեկավարն եմ և հեղինակներից մեկը: Տասնամյակներ առաջ լույս են տեսել պրոֆեսորներ Վազգեն Ջալոյանի և Հենրի Գաբրիելյանի հայոց պատմությանը նվիրված գրքերը և բազմազան մենագրություններ: Իսկ այժմ, երբ արդեն բավականին ժամանակ է անցել, անհրաժեշտություն կա գրելու նոր պատմություններ՝ վերանայված կոնցեպցիայով և նոր հայտնաբերված սկզբնաղբյուրների հիման վրա: Հատկապես վաղ շրջանից՝ 5-րդ դարից մինչև 10-րդ դարը, ես եմ գրում՝ փիլիսոփայության ինստիտուտի աշխատակիցների հետ միասին: Տարբեր մասեր պատրաստ են, կարծում եմ, որ 2—3 տարուց հետո դա կավարտվի և հնարավորություն կունենանք այդ մեծ աշխատությունը ներկայացնել ընթերցողներին: 2-րդ գործը, որի վրա աշխատում եմ, դա Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունն է: Ես այս գործի վրա աշխատում եմ իմ տիկնոջ՝ Քնարիկ Տեր-Դավթյանի հետ միասին: Նա թարգմանել է Ագաթանգեղոսի «Հայոց պատմության», պատմական ու վկայաբանական մասերը: Ես թարգմանել եմ Գրիգոր Լուսավորչի «Վարդապետությունը», որը գրքի կեսն է կամ կեսից մի քիչ ավելի: Այդ գործը ավարտված է: Այժմ աշխատում եմ առաջաբանի ու ծանոթագրությունների վրա: Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» թարգմանություններ ունի եվրոպական գրեթե բոլոր լեզուներով: Տարօրինակ է, բայց մինչև հիմա ռուսերեն թարգմանություն չկա: Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունը նվիրված է Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին:

— Որքանո՞վ եք անդրադառնում այն ձեռագրերին, որոնք այժմ գտնվում են տարբեր երկրներում, տարբեր մարդկանց ձեռքին և գտնվում են վտանգների առաջ:

— Մատենադարանը միշտ էլ իր ուշադրության կենտրոնում է պահել այն ձեռագրերը, որոնք գտնվում են մասնավոր մարդկանց ձեռքում: Մատենադարանը ունի հայերեն ձեռագրերի ամենախոշոր հավաքածուն: Բազմաթիվ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)



Նա բանաստեղծ էր ու արձակագիր, նկարիչ ու քանդակագործ: Ու թեև ինքնուս էր, բայց նաև Ֆրեզնոյի միակ թանգարանի տնօրենն էր, ավելի ճիշտ՝ նրա հիմնադիրը: Փոքրամարմին էր, աշխույժ, մարդամոտ ու հաճելի զրուցակից: Նրա քանդակները Ֆրեզնոյի եզակի ստեղծագործություններն են, քաղաք, որին նա նվիրեց իր կյանքի մեծ մասը և որը նաև նրան տվեց ստեղծագործելու հնարավորություն ու ճանաչում:

Իսկ նա, Վարազ Սամվելյանը՝ այլևս չկա՝ երևանցի պատանին, որ գնաց երկրորդ աշխարհամարտին մասնակցելու, ճակատագրի բերումով ընկավ գերի, հետո՝ փախավ, հետո՝ Ֆրանսիա, հետո՝ Ամերիկա ու մահացավ վերջերս, Ֆրեզնոյում:

Վիլյամ Սարոյանի մոտ բարեկամն էր, և մեծ վարպետն իր համեստ «փոքր» մարդու կերպարը ստեղծելիս գուցե օգտվել է Վարազի կերպարից: Ֆրեզնոյի «Սարոյան մշակույթի կենտրոնի» մուտքի մոտ՝ Սարոյանի կիսանդրին է, քաղաքի մեկ այլ հրապարակում՝ Սարոյանի մեծաքանդակ կոմպոզիցիան, Ս. Երրորդություն հայոց եկեղեցու դիմաց՝ Սասունցի Դավթի արձանը: Բոլորի հեղինակը Վարազ Սամվելյանն է: Ու ապրում էր իր հողից կտրված երևանցի պատանին հեռավոր երկնքի տակ, իր իսկ ստեղծած «Վարազ Սամվելյան՝ ժամանակակից արվեստի թանգարանի» երկրորդ հարկում, զբոսնում էր քաղաքում իր հնաոճ «Շևռոլե» բեռնատար ավտոմեքենայով, նկարում էր, քանդակում, ձուլում: Այդպես՝ տասնամյակներ: Հետո՝ ծերություն, բայց միշտ մնալով «երևանցի պատանի»: Այդպիսին տեսան նրան Ֆրեզնոյում, այդպիսին կմնա նա իրեն ճանաչողների հիշողության մեջ:

Միշտ բարի, աշխատասեր, համեստ, աշխույժ ու հավերժ պատանի Վարազ Սամվելյանը:

Գիտական նոր հիմնադրամ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ստեղծվել է «Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամ»՝ նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ստեղծված անկախ պետությունների համար:

Հիմնադրամը հետապնդում է հետևյալ խնդիրները՝

— այդ երկրների գիտնականների համար հնարավորություն ընձեռել շարունակելու իրենց գիտական հետազոտությունները (հիշյալ երկրների գիտական ներուժը պահպանելու համար).

— աջակցել այդ երկրներում ընթացող ռազմական արդյունաբերության կոնվերսիային.

— օգնել նորանկախ պետություններին՝ շուկայական տնտեսության ստեղծման գործում:

Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամի համագործակցության ծրագիրը հնարավորություն է ստեղծում ԱՄՆ-ի և նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ստեղծված անկախ պետությունների գիտնականներին՝ իրականացնել համատեղ գիտական հետազոտություններ:

Մեկ հետազոտության համար նախատեսվում է 10-ից մինչև 80 հազար ամերիկյան դոլար: Սովորաբար երկու տարվա հետազոտական աշխատանքի համար տրամադրվում է 40 հազար (20 հազարական՝ յուրաքանչյուր տարվա համար)դոլար, գումարի 80 տոկոսը պետք է ծախսվի անմիջականորեն հետազոտության համար:

Դիմումը ներկայացնելու համար պարտադիր են հետևյալ պայմանները.

— մեկական գիտնական ԱՄՆ-ից և նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ստեղծված որևէ անկախ պետությունից, որոնք էլ պատասխանատվություն են կրում համատեղ ծրագրի համար: Համագործակցող երկու կողմերի ներկայացուցիչները պետք է ունենան գիտությունների թեկնածուի կամ դրան համազոր կոչում, հրատարակված 5 աշխատություն (3 հրապարակում 6 տարվա թեկնածու լինելու դեպքում),

— պետք է աշխատեն լրիվ հաստիքով, որևէ քաղաքացիական հիմնարկում,

— նորանկախ պետության գիտնականը պետք է լինի իր երկրի քաղաքացին, իսկ ԱՄՆ-ի գիտնականը՝ ամերիկյան քաղաքացի, կամ մշտական բնակություն ունենա ԱՄՆ-ում,

— ներկայացվող ծրագիրը չի կարող լինել արդեն իսկ հիշյալ հիմնադրամին ներկայացված որևէ այլ ծրագրի մաս,

— յուրաքանչյուր անհատ կարող է համագործակցել միայն մեկ ծրագրում:

Դիմումը պետք է գրվի անգլերեն (հատուկ ձև, 10 օրինակ) և ուղարկվի Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ մինչև 1996 թվականի մարտի 1-ը: Պատասխանը կստացվի 1996 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը: Իսկ կրթաթոշակները կտրվեն մինչև 1996 թվականի հոկտեմբերի 1-ը:

Բոլոր հարցերով խնդրվում է դիմել ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի բաժին:

ՀՀ ԳԱԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— 1. Վարազը Վիլյամ Սարոյանի հետ (Ֆրեզնո, 1978 թ.): 2. Վարազ Սամվելյան, կոմպոզիցիա:

ԴՐՎԱԳՆԵՐ ՄԵԾ ԴԵՐԱՍԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Յոթ տարի է, ինչ ճանապարհում եմ Ազգային գրադարանի երկարամյա լուսանկարիչ Մկրտիչ Ադամյանին: Հաճախ եմ այցելում նրան՝ ցուցահանդեսներ կազմակերպելիս: Միշտ պատրաստակամ, միշտ բարյացակամ աշխատող է: Անտրտունջ բավարարում է իմ խնդրանքը: Երբեմն ինքն է ներկայանում ինձ և հանձնում իր նկարած լուսանկարները: Հաճելի զրուցակից ու լավ ասմտող է: Ունի շուրջ կես դարյա աշխատանքային կենսագրություն: Նրա կյանքում նշանակալից են հատկապես 1958—1966 թվականները: Այդ տարիներին նա աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում: Թեև անցել են տասնյակ տարիներ, բայց դեռ թարմ են նշանավոր արտիստների հետ ունեցած նրա հանդիպումները, տպավորությունները:

Իմ խնդրանքով նա պատմեց մի քանի դեպք, որոնցից մեկը ներկայացնում եմ ընթերցողների ուշադրությանը:

— Իմ առաջին ֆիլմը «01—99» կարճամետրաժ կինոնկարն էր: Դրան հաջորդեց «Ավագախմբի տղաները» գեղարվեստական ֆիլմը: Աշխատանքս տարիներին ինձ հանձնարարեց թանկ են հատկապես աշխատանքս Ներսիսյանի հետ կապված հուշերը: ...Հրաչյան հանախ էր լինում «Հայֆիլմում»: Թատրոնից հետո նրա համար հարազատ էր կինոստուդիան:

1961 թ. ամռանն էր: Գորիսում կինոռեժիսոր Գրիգոր Մելիք-Ավագյանը նկարահանում էր «Արևածագից առաջ» կինոնկարը: Գլխավոր հերոս Արթին պապի դերում հանդես էր գալիս 66-ամյա Հրաչյան: Մեծ մարդկանց, հատկապես դերասաններին, բնորոշ են տարօրինակությունները, ազատ ապրելու ձգտումը, նաև լսել էինք, որ նա հակում ուներ օղու նկատմամբ: Այդ պատճառով նկարահանող խմբից մեկը «հսկում» էր նրան, որ ժողովուրդը «չփախցնի» նրան ու չձախողի նկարահանումները: Իսկ մարդիկ, մեծն ու փոքրը, սիրում էին նրան, հանախ կտրում էին ճանապարհը, զրուցելու ադիթ էին փընտրում, ձգտում էին գեթ մեկ բառ փոխանակել... հարցեր էին տալիս և հարմար պահ էին գտնում, որպեսզի փախցընեն-տանեն մի «մտերմիկ» անկյուն:

Գորիս մեկնելու ճանապարհին մենք մտերմացանք: Դրան անշուշտ նպաստեց այն, որ երկուսով էլ տանկահայ էինք: Եվ նիստ ու կացի, լեզվի ընդհանրությունը մեզ ընկերացրեց: Ղեկավարները նկատելով մեր մտերմությունը, «հրավիրելու» պարտականությունը դրեցին ինձ վրա: Դա առաջարկեց նկարահանող խմբի ղեկավար և ռեժիսոր Մելիք-Ավագյանը:

Քաղաքի հյուրանոցում տեղավորվելիս, ես զգաղեցրի Հրաչյայի հարևան սենյակը:

Մի օր առավոտյան նախաճաշից առաջ խմեցինք մեր հասանելիք ամենօրյա 100 գրամ օղին և մտանք հյուրանոցի դիմացի ճաշարանը: Նոր էինք տեղավորվել, երբ մեզ մոտեցավ Գորիսի դպրոցի մանկավարժներից մեկը. ողջունեց երկուսիս և ասաց. «Սա իմ կյանքի երջանիկ օրերից մեկն է, քանի որ հանդիպել եմ ձեզ, կապուտաչյա Հրաչյա»: Ապա զրույցի ընթացքում ասաց. դուք ձեր մասին հուշեր գրելո՞ւ եք:

— Ես ադամկ բաներ չգիտեմ,— ասաց Հրաչյան,— եթե գրե, Լևոնս կգրե:

— Որպեսզի մեր զրույցը հետաքրքիր լինի,— ասաց մանկավարժը,— ուզում եմ մի բանով հյուրասիրել ձեզ:

Քանի որ խոսքը օղու մասին էր, ուստի ես ասացի, որ մեր այսօրվա նորման կատարել ենք: Հրաչյան խեթ-խեթ նայեց ինձ, իր սաստող հայացքով հասկացրեց, որ անհարմար է մերժել մարդու առաջարկը:

— Խնդրում եմ միայն առանց 22ի, երեքիս համար մեկական բաժակ,— առաջարկեցի ես,— ավելորդը պետք չէ:

Մի քանի օր հետո Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան թատրոնը հանդիպում կազմակերպեց մեր նկարահանող խմբի հետ: Ներկա էին նաև Գուրգեն Ջանիբեկյանը, Արմեն Ջիգարխանյանը և ուրիշներ:

Հանդիպումը երեկոյան էր, ժամը 19-ին: Այդ օրը բնության տեսարաններ նկարահանեցինք և կես օր աշխատելուց հետո նախապատրաստվեցինք հանդիպմանը: Ճաշելուց հետո ասացի՝ վարպետ, գնանք հյուրանոց հանգըստանանք: Բայց նա առաջարկեց զբոսնել քաղաքային այգում: Ես ստիպված ենթարկվեցի նրան և մենք խորացանք քաղաքային զբոսայգում, որտեղ գրեթե երկուսով էինք, ուրիշ զբոսնող չկար:

Որոշ ժամանակ հետո խընդրեցի՝ ուշանում ենք, ետ դառնանք:

— Զբոսնենք, այստեղ լավ է, օդը մաքուր է, ես գիտեմ, երբ պետք է երթանք հանդիպման,— ասաց նա:

Հանդիպումից կես ժամ առաջ ուղևորվեցինք թատրոն: Շենքը պաշարել էր ժողովուրդը:

Մեծ արտիստին նկատելով, մարդիկ գոչում էին.

— Հրաչյա՜ն, Հրաչյա՜ն...

Մեր խումբը հանդիպումից առաջ բարձրացավ բեմ: Այդ պահին ես ետ քաշվեցի: Հրաչյան ասաց.

— Ո՞ւր ես գնում,

— Ես բեմ չեմ բարձրանա, մի աթոռ կխնդրեմ և դահլիճում կտեղավորվեմ ձեր դիմացը, ձեր աչքի առաջ:

Սկսվեց հանդիպումը: Ելույթ ունեցողները խոսեցին ֆիլմի, նրա ռեժիսորի, արտիստներ Ջանիբեկյանի, Ներսիսյանի, Ջիգարխանյանի և ուրիշների մասին:

Այդտեղ խոսք ասաց նաև մեր ծանոթ մանկավարժը, որին պատահական հանդիպել էինք մի քանի օր առաջ:

— Ես այն երջանիկներից եմ,— ասաց նա,— որ անձամբ ճանաչում եմ Հրաչյա Ներսիսյանին: Ազնվագույն մարդ, անկեղծ ու մեծ դերասան, նա...

Ու սկսեց այնպիսի մանրամասներ պատմել նրա բնավորության, կյանքի մասին, որ ասես 20 տարվա բարեկամներ էին: Իրականում մենք հանդիպել էինք ընդամենը 20 րոպե: Լսում էի մանկավարժին ու ականջներիս չէի հավատում. թեև անծանոթ էր նա, բայց այնքան ճիշտ ու անկեղծ էր ներկայացնում Հրաչյային, որ կարող էր առաջացնել մեծ դերասանի ամենամոտ, ամենահարազատ բարեկամի նախանձը: Ես ևս մեկ անգամ անդրադարձա այն հարցին, թե որքան հարազատ ու մոտ է բոլորին մեծ դերասանը, որի կերտած կերպարների մեջ ամեն մարդ կարող է տեսնել իրեն՝ դերասանին, պատմել նրա մասին, որպես ծանոթ մարդու բնավորության մասին:

Հրաչյա Ներսիսյանի մասին ուրիշ դեպքեր էլ պատմեց իմ գործընկեր Մկրտիչը: Բայց ես նպատակահարմար գտա գրի առնել այսքանը: Թեև շատ էի կարդացել Հրաչյայի մասին հուշեր, ուսումնասիրություններ, հոդվածներ ու բանաստեղծություններ և նրա ծնընդյան 100-ամյակի առթիվ կազմակերպել էի ցուցահանդես, բայց ականատեսի պատմած հուշերն առավել տպավորիչ էին:

Հրաչյա ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

Ձեռագրեր կան նաև Երուսաղեմում, Վենետիկում, Վիեննայում, Փարիզում, Լոնդոնի Բրիտանական գրադարանում: Այդ հավաքածուները, որոնք գտնվում են պետության կամ եկեղեցու հովանավորության տակ, նրանց սեփականությունն են և անհանգստություն չեն ներշնչում: Մենք մտահոգված ենք այն ձեռագրերի մասին, որոնք գտնվում են մասնավոր մարդկանց ձեռքերում և հսկողությունից դուրս են, ամեն ինչ կարող է այդ ձեռագրերի հետ պատահել: Եվ այս տարիներին բարեբախտաբար, մեզ հաջողվել է որպես նվեր ըստանալ կամ գնել բազմաթիվ ձեռագրեր:

Այս առիթով ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել այն մարդկանց, ովքեր բարձր գիտակցությամբ, հայրենասիրական ու ազգասիրական մեծ մղումներով, ձեռագրերը հանձնում են Մատենադարանին: Չէ՞ որ, ի վերջո, մարդկանցից, հետազոտությունից ու պատշաճ պահպանությունից զրկված, մեկուսացված ձեռագիրը ոչ մի արժեք չի ներկայացնում: Ինչպես արժեքից զուրկ է «մասնավոր պեղումներից» տուն տարած այն հուշարձանը, որը կտրված է իր միջավայրից, ուրեմն նաև ժամանակաշրջանից ու իր ստեղծման պատմությունից: Կան ձեռագրեր, որոնց ճակատագիրը մեզ համար անհայտ է՝ դրանց թվում նաև Մուղրության ավետարանը՝ 974 թ., ձեռագիր արծաթապատ մագաղաթյա այդ հուշարձանը, որը, իհարկե, երբեք չենք աչքաթող արել: Հուսանք, կմտնենա այն ժամանակը, երբ ծուղրությունները կհասկանան, որ պետք է փրկել այդ մեծ ձեռագիրը, որը կարելի է դասել էջմիածնի ավետարանի, Լազարյան ավետարանի, Վեհափառի ավետարանի կողքին: Եվ այդ հնագույն նմուշը կրդառնա մեր ողջ ժողովրդի սեփականությունը: Հուսանք, որ այդ ժամանակը մոտենում է:

Հետաքրքրիր է

Հայկական ձեռագրերն ունեն տարբեր չափեր ու ծավալ, ամենամեծ ձեռագիրը «Մշո ճառընտիրն» է, որն ունի 55.3×70,5 սմ մեծություն և կշռում է 27,5 կգ, իսկ ամենափոքրը՝ 1434 թվ. «Տոնացույցն» է, որն ունի 3×4 սմ մեծություն և կշռում է 19 գ.:

«Մշո ճառընտիրը» վարքերի, վկայությունների, ներբողների, եկեղեցական հայրերի ճառերի, ինչպես նաև հայ պատմիչների երկերից քաղված հատվածների ժողովածու է, գրված՝ 1200—1202 թթ.: 1202 թ. ձեռագիրը գերեվարվել, ընկել է Բաբերդի դատավոր Ալլադինի ձեռքը և 4000 արծաթե դրամով ետ է գնվել ու տարվել Մշո Առաքելոց վանքը, ուր և պահվել է մինչև Մեծ եղեռնի տարիները:

Ձեռագիրը փրկվել է երկու հայ գեղջուկ կանանց շանթերով, ովքեր գրքի ծանրության պատճառով գաղթի ճանապարհին այն բաժանել են երկու մասի: Գրիչը Վարդան Կարնեցին է, ծաղկողը՝ Ստեփանոսը: «Մշո ճառընտիրը», որը պահվում է Մատենադարանում, ունի 601 թերթ, ևս 17 թերթ պահվում է Վենետիկում: Նախապես այն ունեցել է 660 թերթ:

Կենսաբանությունը՝ «օրենքից դուրս»

ԱՆՀԱՎԱՏԱԼԻ Է, ԲԱՑԵ ՓԱՍ

Օրենք կրթության մասին, կրթության բարեփոխումների ծրագիր, կրթության մարտավարական և հեռանկարային ծրագիր, կրթության և գիտության նախարար, կրթահամակարգի աշխատողների և ուսանողների սոցիալական ծրագիր՝ այս բոլորն առայժմ մշուշի մեջ են, ավելի ստույգ՝ չկան: Դե, ինչ, սպասենք համբերությամբ: Ո՞վ գիտե, գուցե թե լինեն:

Իսկ մինչ այդ կրթության և գիտության նախարարությունում փորձ է արվում անձնավորված կցկտուր քայլերով ժամանակ շահել՝ ի հաշիվ կրթահամակարգի աշխատողների և ուսանողների համբերության: Ի դեպ, մեր հաստատ համոզմամբ, չարաշահվում է նաև հասարակայնության լայն խավերի շահերը:

Ասվածը մերկապարանոց չլինելու համար խոսենք փաստերով: Բժշկագիտության ողջ պատմությունը վկայում է, որ կենսաբանության իմացությունը հացի ու ջրի պես անհրաժեշտ է մարդու, նրա առողջությամբ զբաղվող, նրան բուժող լուրաքանչյուր բժշկի համար: Չի անհնար է մարդուն բուժել՝ չիմանալով նրա օրգանիզմում ընթացող և առկա ԿԵՆՍԱ-բանական պրոցեսները: Թվում է, թե սա այնքան պարզ ու հայտնի ճշմարտություն է, որ խոսելն այդ մասին ավելորդ է նույնիսկ:

Սակայն ժողովրդավարության և շուկայական հարաբերությունների մեր օրերում նոր լույս սփռվեց այդ հնագույն գիտության դասական և ավանդական ըմբռնման վրա:

Դա կատարվեց «Դիմորդ—95» մրցախառնաշփոթում, երբ դիմորդներն ու նրանց ծնողները հանան, բայց անհույս պայքար էին մղում կենսաբանության առարկայի քննող հանձնաժողովի (և ոչ միայն նրա) անհավատալի խարդախությունների դեմ: Թե ինչ եղավ հետո, մարդիկ իմացան հեռուստատեսային եթերից և թերթերից: Քննող հանձնաժողովի նախագահը բռնվեց հանցանքի վայրում և բանտարկվեց:

Անշուշտ, կրթության և գիտության նախարարությունը համապատասխան եզրակացություն արեց այդ խայտառակ փաստից: Ո՞չ, ո՞չ: Խոսքն այն մասին չէ, որ խարդախ ու հանցագործ ճանապարհով կենսաբանություն առարկայից բարձր «բալեր» ստացած դիմորդներին զրկեցին բուհում սովորելու իրավունքից: Հավ լիցի, այդպիսի բան չարվեց: Փորձ էլ չարվեց վերականգնել կամ պաշտպանել անամոթ ու անթաքույց միտումնավորությամբ ցածր «բալերի» դատապարտված հարյուրավոր դիմորդների իրավունքներն ու շահերը: Այլ խոսքով, արդարությունը վերականգնելու ուղղությամբ ոչ մի քայլ չարվեց:

Բայց դրա փոխարեն կրթության և գիտության նախարարությունը, ինչպես ասացինք, ընդունեց ուղղակի «իմաստուն» որոշում: Քանի որ կենսաբանության առարկայի քննական հանձնաժողովի նախագահը հանցագործի մեկն էր, ապա անհրաժեշտ է «օրենքից դուրս հայտարարել» կենսաբանություն առարկան: Անհեթեթ է,— կասեք դուք և երիցս իրավացի կլինեք:

Սակայն ձեր մտահանգումները հարցի էությունը չեն փոխում, քանի որ նախարարությունը գտել է, որ այսուհետ կենսաբանություն առարկայի իմացությունը ապագա բժշկի համար ավելորդ շռայլություն է, և այն փոխարինել է մեկ այլ, առայժմ անվտանգ առարկայով:

Եվ այսպես, ուժային եղանակով, առանց գիտական-մասնագիտական հիմնավորման, գրչի մեկ հարվածով կենսաբանության «վարկաբեկված» առարկան օտարվեց, քանի որ այն կարող էր վարակել նաև առողջ (իբր թե) առարկաները:

Ինչպես ասում են՝ չգիտես, խնդա՞ս, թե լա՞ս: Այն, որ այս արտառոց երևույթի մասին լռում են, չենք զարմանում, զի ասում են «լռությունը ոսկի է»: Իհարկե, կարելի է նաև լռել, բայց ինչպե՞ս պաշտպանել այն հիվանդների շահերը, որոնք պետք է բուժվեն կենսաբանություն չիմացող, բայց քվանտային մեխանիկայից գերազանց գնահատված ապագա բժիշկները:

Գուցե թե ժամանակն է ստեղծել կենսաբանների պաշտպանության կոմիտե կամ պարզապես հիվանդ մարդկանց փրկության արհմիություն:

«Դիմորդ—96»-ին շատ քիչ ժամանակ է մնացել: Տեսնես ո՞ւմն է «օրենքից դուրս հայտարարվելու հերթը»: Իսկ որ այդպիսին կլինի, չենք տարակուսում, քանի որ քննական հանձնաժողովների նախագահներին կրթության և գիտության նախարարությունը ընտրում է ամենայն բծախնդրությամբ և մանավանդ՝ հաշվի առնելով նրանց մարդկային առաքինությունն ու ազնվությունը:

Գառնիկ ՎԱՂԱՐՇԱԿՅԱՆ
ՀՀ բուհերի աշխատողների և ուսանողների արհմիության հանրապետական խորհրդի նախագահ

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՐԱՇԱԳՈՐԾ

Բնության հրաշագործությունների մասին շատ է գրվել: Բայց նրա ամենամեծ հրաշքն այն է, որ ամեն անգամ մի նոր անակնկալ ու գաղտնիք է հրամցնում մարդուն: Իսկ վերջինս շարունակում է զարմանալ ու զարմանալ: Բառաբաի մասին՝ չոր սավանների այդ հրաշքի մասին, գիտենք. այն աֆրիկացիների համար ամեն ինչ է՝ այլուր, քաղցրավենիք, պտուղ, տարբեր ուտեստներ: Լսել ենք նաև քայլող ծառի, «մարդակեր» ծառի, կաուչուկի ու այլևայլ բույսերի մասին: Բայց, գիտե՞ք, որ ձեր բնակարաններում ամենաշատ տարածում գտած ծանոթ կակտուսներից ահա այս մեկն իր հայրենիքում՝ անապատում, հրաշքներ է գործում: Սա հանրահայտ ադամաթուզն է: Հյութեղ պտուղները, որոնք կանայա-նարնջագույն են և մի քիչ նման են քիվի կոչվող ձեզ ծանոթ պտղին, աճում են ամենայոր անապատում: Այս թփերը ղեկացած ավազներից ոչ միայն խոնավություն են կորզում, այլև իրենց պտուղների մեջ կուտակում են սառնարանային պաղության քաղցրահամ հյութ: Շարավից պապանձված քանի՞-քանի՞ մարդ, ամբողջ քարավաններ է փրկել անապատի այս բնակիչը: Դե, մի հավատա, որ գործ ունես բնության իսկական հրաշագործության հետ:

Վ. Մ.

ՆՊԱՏԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24 թ., հեռախոս՝ 22-44-26:

ՀՀ տեղեկատվության նախարարության «Պարբերական» հրատարակչության տպարան: Դասիչ՝ 69238, գրանցման վկայական՝ 888: Ստորագրված է տպագրության 15.12.1995 թ.:

«НПАТАК» — Газета Национальной Академии наук РА